


## ՏՈՒՄԱՅԻ ՄԵՋ «ՃԵՂ ԱՆ ԻՍԼԱՄ» ԱՀԱՐԵԿՅԱԿԱՆ ԽԱՐԵԿՈՐՄԱՆ ԿՈՒՄԷ ԱՌԵՆԱԳՈՒՅԾ ԲՈՂՈՐ ԶԻՆՈՒՐՈՒՄԵՐՆ ՈՒ ՔՍՈՒՔՅՈՒՆՆԵՐՈ ԱՅՍՏԱԳՐՈՒԵՅԱՆ

Երկուշաբթի, 9 Ապրիլի երեկոյեան, Տումայի մէջ, Սուրիոյ պետութիւնը յարգելով իր խոստումը, ազատագրեց «Ճեղ ալ Իսլամ» ահաբեկչական խմբաւորման կողմէ 2013-էն ի վեր առեւանգուած ու կալանաւորուած բոլոր զինուորներն ու քաղաքայինները:



Գիշերուան ժամը 11:00-ին, ազատագրուած տասնեակ առեւանգեալներ տեղափոխող երկու հանրակառքեր հասան Ուաֆիտին անցքի մուտքը՝ սուրիական բանակին մօտ, ապա անոնք տարուեցան Դամասկոսի Ֆայիա սրահ՝ միանալու իրենց ծնողներուն:



Պաշտօնական աղբիւրներ յայտնեցին, որ Տումայի մէջ այժմ ոչ մէկ առեւանգեալ մնացած է, ահաբեկչական յիշեալ խմբաւորումը պիտի յանձնէ Նաեւ Նահատակներուն դիակները:

Երեքշաբթի 10 Ապրիլին, Նախագահ Պաշտար ալ Ասատ ընդունեց այն ծնողները, որոնց առեւանգեալ զաւակները ազատագրուած այս խումբերուն մէջ չէին գտնուած: Նախագահը հուսատիացուց, որ պետութիւնը պիտի հետապնդէ բոլոր առեւանգեալներուն հարցը, մինչեւ որ ազատագրէ բոլորը, որովհետեւ սա ոչ միայն մարդկային, այլեւ ազգային հարց է:

## Հայաստանի Հանրապետութեան 4-րդ նախագահ Արմեն Սարգսեան Ստանաբուլի Լիւճօրո՞ւմի Ինտերնալ

9 Ապրիլին «Կարեն Տեմիրճեան»ի անուան մարզահամերգային համալիրին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Նորընտիր Նախագահ Արմեն Սարգսեանի երդման պաշտօնական արարողութիւնը, որուն ներկայ գըտնուեցան Ազգային ժողովի պատգամաւորներ, Հայաստանի մէջ հաւատարմագրուած դեսպաններ, մշակութային գործիչներ Հայաստանէն եւ այլ երկիրներէ, սփիւռքահայեր, հասարակական եւ քաղաքական գործիչներ:



Հայաստանի սահմանադրութեան համաձայն, Նախագահը իր պաշտօնը կը ստանձնէ Ազգային ժողովի յատուկ նիստին, որուն բացումը կատարուեցաւ Հայաստանի Ազգային ժողովի Նախագահ Արա Բաբոյեանի խօսքով: Ապա Նորընտիր Նախագահ Արմեն Սարգսեան երդումը կատարեց՝ ձեռքը դնելով այս առիթով յատուկ մատենադարանէն բերուած 7-րդ դարու Վեհամօր Աւետարանի եւ Հայաստանի սահմանադրութեան մայր օրինակին վրայ. «Ստանձնելով հանրապետութեան Նախագահի պաշտօնը, կ'երդմում հաւատարիմ ըլլալ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան, իմ լիազօրութիւններս կատարած ատեն ըլլալ անաչառ, առաջնորդուիլ միայն համապետական ու համազգային շահերով եւ իմ ամբողջ ոյժս ներդրել ազգային միասնութեան ամրապնդման գործին», յայտարարեց ան:

Ապա Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի հայրապետական օրհնութեան խօսքէն ետք, Նորընտիր Նախագահ Արմեն Սարգսեան մեծ պատիւ եւ պատասխանատուութիւն նկատեց Նման բարձր պաշտօնի ստանձնումը՝ յայտարարելով, որ իր ամբողջ ոյժով եւ եռանդով պիտի գործէ արդարացնելու համար այն յոյսերը, զորս իր վրայ կը դնեն Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի հայրենակիցները: Ան անդրադարձաւ վերանկախացումէն ետք տարուած մեծ աշխատանքին, պետական կուռ համակարգի

Շար. 12 3 >



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱՎԸ՝ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՏՕՆԸ

«Աստուած ձեզ կանչեց որ ազատ ըլլաք» (Գղ 5. 13)

Աստուածաստեղծ մարդ արարածի հոգիին ամենագործող ձգտումը ազատութիւնն է: Մարդկութեան՝ ընդհանրապէս եւ անոր մէջ անհատին անբռնաբարելի իրաւունքն է ազատութիւնը: Տեղերու եւ ազգերու հաւաքական ինքնարտայայտման եւ ինքնորոշման բարձրագոյն եղանակը ազատ հողատարածք, երկիր՝ տուն ունենալն է, ուր կարենան կեանքը ազատօրէն ապրիլ հաւաքական ներկայութեամբ, միասնաբար գործել իւրայատկութեամբ եւ ամենաընդարձակ առումով ինքնութիւն կերտել:

Հայու տեսակի պատմական հոլովոյթը կը հաստատէ վերի պատկերացման իրական ըլլալը: Դարերու խորքէն ընթացք առած հայերը, Փոքր Ասիոյ արեւելեան կողմն ու հարաւային Կովկասին մէջ, Աստուածատուր երկրին՝ հողին (Բ.Օր 32.8) վրայ կաղնիացած եւ հօրենական ժառանգութեամբ հայրենիքի վերափոխուած (Բ.Օր 30.5), հայրենի տունը՝ Հայաստանը կերտեցին, մշակեցին եւ ստեղծագործեցին՝ ապրելու Հայկ Նահապետին երագած ազատ ու անկախ հայկական հողին վրայ (Սղ 74. 17):



Հայաստանի պատմութիւնը վերածուեցաւ հայոց պատմութեան, շնորհիւ մեր արքաներուն եւ իշխաններուն, մեր կրօնական ու հոգեւորական պատասխանատուներուն, գեղջուկներուն ու շինականներուն, լուսամիտ գաւակներուն՝ լուսաւորեալներուն եւ լուսաւորիչներուն, որոնք մեր ազգատեսակին յառաջդիմութեան ռահվիրաները եղան, մեր ժողովուրդին պարգեւեցին համաշխարհային ազգերուն մէջ իր ուրոյն եւ արժանաւոր տեղը:

Մեր պատմութեան ընթացքի լուսաւոր էջերուն կողքն ի վար ունեցանք մռայլ, մթազնած, եղերական ու մահազդու ժամանակներ, երբեմն՝ երկարաձգուող ու երբեմն՝ փայլատակող, բայց ամենակարեւորը, մեր դարագընաց կեանքի վերիվայրումներուն պահեցինք Յարութեան հաւատքը, Երկնաւորէն օրհնեալ լուսադրող լաւատեսութիւնը եւ հայրենիք վերակերտելու անընկճելի կամքը:

Անցեալ դարասկիզբը, մեր ի սպառ կորուստներու եւ մեր ցեղին բնաջնջման մահազուժով բացուեցաւ, սակայն մարդկութեան ընծայաբերած՝ յիշատակութեան արժանի, բարութեան եւ արութեան մեր գործերը՝ աղօթանքման բուրումնաւետ խունկերը, լսելի դարձան Երկնաւորին կողմէ: Յեղին գոյատեւումին սպառնացող փոթորիկներուն դիմաց «Հայկ»եան ու «Վարդան»եան նոր օրերու անմահները՝ անձնագոհութեան այնոյեանները ծանացան, ծանորագոյն պահուան մէջ մէկ սիրտ, մէկ հոգի եւ մէկ անձի մարմնացումով, «արիւնաքամ» եւ «խենթ» կարծուածները գտան հնարքը եւ ողջ հայութեան պարգեւեցին, պատմական հայրենի հողին մէկ փոքր տարածքին վրայ վերահաստատուած Հայաստանը՝ Հանրապետութիւն Հայոց, եւ բացուեցաւ յաջողութեանց եւ յաղթանակներու դարաշրջանը, յղի նոր կարելիութիւններով եւ նոյնքան ալ նոր իրագործումներով:

Այդ նոր աւարայրեան՝ ազատութեան եւ անկախութեան առաջնորդող համահայկական պատերազմը մեր ժողովուրդին յանձնեց ինքնօրէն ու ազատ ապրելու իրաւունքը եւ 28 Մայիս 1918-ի Անկախութեան մեծագին թուականը վերածուեցաւ խորհուրդի, խորհրդանշանի, ժամանակակից քա-

ՍՈՒՐԻՎԱԳՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԵՆԵՐ  
Նոր Կիրակի  
8 Ապրիլ 2018  
Շար. 12 16 >



### Խմբագրական

## ՍՈՒՐԻԱԿԱՆ ՏԱԳՆԱԳՐ ՆՈՐ ՓՈՒԼԻ ՍԵՄԻՆ

Երբ հակամարտության մը կողմերն մեկը յաճախակի սպառնալիքներով ու նախագգուշացումներով հանդես գայ, պատերազմի հաւանականութիւնը բացառուած կը համարուի, քանի որ պատերազմը անսպասելի յարձակումներով եւ ոչ թէ փոխադարձ նախագգուշացումներով կը բռնկի: Ռազմական ուժերու կուտակումը, սակայն, պատերազմի հաւանականութեան կարելիութիւնը կը յուշէ:

Սուրիական բեմի վրայ, այս երկու բեմագրութիւններն ալ առկայ են այս օրերուն:

Գերպետութիւններու բանաւոր կռիւն է, որ իրավիճակի սրման կ'առաջնորդէ՝ հասնելու աւելի մեծ սակարկութիւններով բանակցելու փուլի, կամ բռնկեցնելու լայնածաւալ պատերազմ մը, որուն մասին սպառնական խօսքերու այլք կը բարձրացնէ ԱՄՆ-ի նախագահը, առանց Փենթագոնի հաւանութիւնն իսկ ստացած ըլլալու:

Իսրայէլէն ԱՄՆ, Անգլիա ու Ֆրանսա հոգեբանական ծրագրուած պատերազմ մը ծայր կ'առնէ՝ նախ բանաւոր սպառնալիքներու լեզուով, մինչեւ ուժերու վերջնական կուտակումն ու արեւմտեան երկիրներու տեսակետներուն համադրումը: ԱՄՆ կը սպառնայ Ռուսիոյ իր «ուշիմ հրթիռներ»ով, իսկ Ռուսիա կը սպառնայ քանդել Սուրիոյ արեւելեան տարածքին վրայ տեղակայուած ամերիկեան ռազմակայանները, միջերկրականի մէջ «ուշիմ» հրթիռներու արձակման վայրերը, միեւնոյն ատեն երեւան հանել Ղութայի մէջ քիմիականի օգտագործման թեզին ամբողջ կեղծիքը, որով ԱՄՆ կը փորձէ ի նպաստ իրեն կողմնորոշել արեւմուտքի հանրային կարծիքը:

Միւս կողմէ, Ռուսիոյ նախագահը կոչ կ'ուղղէ հաւասարակշռուած ու խելամիտ բանակցութիւններ վարելու սուրիական տագնապին գծով՝ գերծ մնալով տարածաշրջանն ու ողջ աշխարհը վտանգի ենթարկելու արկածախնդրութենէն:

Այսուհանդերձ, ներկայ պահուն սպառնական փոխադարձ խօսքերու այլքով կ'ողողուի կացութիւնը:

Միջին Արեւելքի մէջ Ռուսիոյ ամբարձրող դիրքերը վերակազմել սկսան արեւմուտք-ԱՄՆ դաշինքը, որ Իրանի հետ հիւլէական ջերմութիւն շուրջ համաձայնութեան օրերուն ենթակայ էր տարտղնուր: Զրտական գործօնին թուլացումը նօսրացուց տարածաշրջանի մէջ ԱՄՆ-ի դերակատարութիւնը: Միւս կողմէ, սուրիական բանակին յառաջխաղացքը, յատկապէս հարաւային կարգ մը շրջաններու գինեալ ահաբեկիչներէ ազատագրումը, մտահոգեց Իսրայէլը: Սուրիական պատերազմի նախորդ 7 տարիներուն, այդ շրջաններու ահաբեկչական խմբաւորումներուն գորակցելով, վերջինս պատուար մը յառաջացուցած էր Ռուսիա-Իրան-Սուրիա-լիբանանեան դիմադրութիւն առանցքին դէմ:

Այս առանցքին թուլացումն է արեւմտեան դաշինքի եւ Իսրայէլի հիմնական նպատակը:

Օրերս, Սուրիոյ մէջ, ժողովրդային մակարդակով թեւեւ անտարբերութիւն կը տիրէ յաճախակիօրէն կրկնուող այս սպառնալիքներուն նկատմամբ, այնուհետեւ պաշտօնական կողմեր, անոնց տուն տուող երկու հաւանականութիւններն ալ նկատի կ'առնեն:

Առաջինը՝ յարձակումի հաւանականութիւնն է, որուն հակադարձելու եւ ամերիկեան խարխիսները հարուածելու կը պատրաստուին ռուսական եւ սուրիական օդային պաշտպանութեան համակարգերը:

Երկրորդը՝ զիջումներ խլելու միտումով յառաջ մղուող հոգեբանական պատերազմի հաւանականութիւնն է, որ ժամանակաւոր է եւ հակամարտող կողմերը բանակցութիւններու նոր փուլի մը կրնայ առաջնորդել:

Երկու հաւանականութիւններն ալ առկայ են այսօր սուրիական պատկերին մէջ:

Այս թոնրոտիւն մէջ Թուրքիոյ ներկայութիւնը նոյնքան մտահոգիչ է:

Թուրքիա թեւեւ համաձայնութիւն կնքած է ռուսական կողմին հետ, սակայն ԱՄՆ-ի հետ երկխօսութեան կարելիութիւնն ալ չէ անտեսած ու պատերազմ ծագելու պարագային, կրնայ դիրքութեամբ շրջել իր ուղղութիւնը՝ յանուն իր շահերուն, մանաւանդ եթէ նատի ունենանք, որ օրեր առաջ, Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը, պատասխանելով Լաւրովի Աֆրիկը Սուրիոյ կառավարութեան յանձնելու կոչին, յայտնած էր, որ Թուրքիա պատրաստ չէ յանձնել գայն: Տակաւին ինչ խօսք ինչպէս սուրիական ճարապուստի, այնպէս ալ Աֆրիկի մէջ ծածանող թրջական դրոշներուն մասին:

Թուրքիա ներգրաւուած է երկու բեւեռներուն մէջ ալ, եւ հակամետ է որեւէ պահ փոխելու իր դիրքորոշումը ու բռնագրաւած իր տարածքները ենթահող ունենալով սրելու սուրիական տագնապը՝ այս անգամ ի նպաստ արեւմտեան բեւեռին գործելով:

«Գ.»

-Չորեքշաբթի, 11 Ապրիլ 2018-ին, Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ուալիտ ալ Մուալլէմ ընդունեց Իրանի Իսլամական Յեղափոխութեան Գերագոյն Առաջնորդի միջազգային հարցերու խորհրդական Ալի Աքպար Ուիլայաթին: Կողմերը քննարկեցին Սուրիոյ եւ Իրանի ռազմավարական յարաբերութիւններու զարգացման հեռանկարները, ինչպէս նաեւ տարածաշրջանի եւ Սուրիոյ զարգացումները՝ քաղաքական իրավիճակներու փոփոխութեան եւ սուրիական բանակին ու անոր դաշնակիցներուն յարթանակներուն լոյսին տակ:



Մուալլէմ, Ուիլայաթիի ներկայացնելէ ետք Սուրիոյ վերջին զարգացումներն ու սուրիական բանակին յառաջխաղացքը, երախտագիտութիւն յայտնեց Իրանին՝ գանազան բնագաւառներու մէջ Սուրիոյ գօրավիզ կանգնելուն համար:

Իր կարգին, Ուիլայաթի շեշտեց, որ Իրան պիտի շարունակէ գօրակցի Սուրիոյ ու անոր ժողովուրդին, ինչպէս նաեւ սատար պիտի հանդիսանայ ահաբեկչութեան դէմ անոր մղած պայքարին՝ պահպանելու Սուրիոյ տարածքային ամբողջականութիւնն ու վերականգնելու տարածաշրջանի անվտանգութիւնը: Ուիլայաթի շնորհաւորեց Սուրիան՝ Ղութայի մէջ սուրիական բանակին տարած յարթանակին համար ու հաւաստիացուց, որ Իրան պիտի շարունակէ ամրապնդել Սուրիոյ հետ իր ռազմավարական յարաբերութիւնները:

-Երեքշաբթի, 10 Ապրիլ 2018-ին, ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի նիստին, Ռուսիա Վեթօ կիրառեց ամերիկեան այն բանաձեւին դէմ, որուն համաձայն Սուրիոյ մէջ քիմիական զէնքերու օգտագործման շուրջ հետաքըննութիւն կատարելու յատուկ մեքանիզմ մը պիտի ստեղծուէր:

Պոլիվիա եւս դէմ քուէարկեց այս բանաձեւին, իսկ Չինաստան ձեռնպահ մնաց:



Նախքան քուէարկութիւնը, ՄԱԿ-ի մօտ Ռուսիոյ մնայուն ներկայացուցիչ Ֆասիլի Նիպիլիկիա նկատել տուաւ, որ Մոսկուա կը մերժէ ամերիկեան բանաձեւը, որովհետեւ ան կը ներառէ նախապէս ներկայացուած միացեալ հետաքըննութեան մեքանիզմներուն բոլոր թերութիւնները:

Նիպիլիկիա յայտնեց, որ ԱՄՆ կրկին կը փորձէ ճակատամարտ երթալ՝ ապատեղեկատուութիւն տարածելով միջազգային ընտանիքէն ներս: Ան Տումայի մէջ քիմիական զէնքերու օգտագործման շուրջ հետաքըննութիւն կատարելու գծով այս բանաձեւը պատրաստած է առանց ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի բոլոր անդամներուն հաւանութիւնը ստանալու:

Նիպիլիկիա աւելցուց, որ Տումայի մէջ քիմիական զէնքեր օգտագործուած չըլլալուն շուրջ փաստացի տուեալներ գոյութիւն ունին, սակայն ԱՄՆ չ'ուզեց նկատի առնել գանոնք, որովհետեւ պատրուակ կը փնտռէ Սուրիոյ դէմ յարձակում գործելու համար:

-Երկուշաբթի, 9 Ապրիլ 2018-ին, Սուրիոյ Արտաքին Գործոց նախարարութենէն աղբիւր մը հաստատեց, որ Սուրիան քիմիական զէնքերու օգտագործումով ամբաստանելը անհամոզիչ խաղաքարտ է, որ կ'օգտագործուի միայն Սուրիոյ մէջ ահաբեկչութիւնը հովանաւորող երկիրներուն կողմէ:



Աղբիւրը հաղորդեց. «Սուրիական բանակին իւրաքանչիւր յառաջխաղացքէն ետք, քիմիական զէնքերու օգտագործման ծրար մը երեւան կու գայ, որպէսզի, այս պարագային Տումայի մէջ, ահաբեկիչներու ներկայութիւնը երկարաձգուի ու հարցը քաշքշուի՝ առանց լուծուելու: Արեւելեան Ղութայի մէջ Սուրիոյ ուղղուած քիմիական զէնքերու օգտագործման ամբաստանութիւնը նախապէս բեմագրուած էր, այս ուղղութեամբ փաստացի տեղեկութիւններ կային, որոնց մասին քանիցս յայտարարեց Սուրիոյ պետութիւնը»:

-Սուրիական պաշտօնական աղբիւրներ յայտնեցին, թէ Կիրակի, 8 Ապրիլ 2018-ի առաւօտուն, Տումայի «Ճէշ ալ Իսլամ» զինեալ ահաբեկչական խմբաւորման հետ գոյացած է համաձայնութիւն մը, ըստ որուն, ահաբեկչական այս խմբաւորումը ազատ պիտի արձակէ Տումայի բոլոր առեւանգեալները, փոխաբերելով խմբաւորման անդամները, իրենց ընտանիքներուն հետ, յառաջիկայ 48 ժամուան ընթացքին դուրս պիտի ելլեն Տումայէն եւ սուրիական բանակին տրամադրած հանրակառքերով պիտի ուղղուին Սուրիոյ հիւսիսային ճարապուստ աւան՝ պետական կողմին յանձնելէ ետք իրենց ծանր եւ միջին զէնքերն ու սուրիական բանակի նահատակներուն դիակները: Այնուհետեւ Տումայի պետական բոլոր ենթակառուցները պիտի սկսին իրենց օրինական գործունէութեան:





# Լուրեր Հայաշխարհին

## ՎԱՏԻԿԱՆԻ ՄԵՋ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ԱՐԶԱՆԻՆ ՊՆՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒՄԸ

## Հայաստանի Հանրապետության...

Սկզբը՝ էջ 1

Հինգշաբթի, 5 Ապրիլ 2018-ին, յետ 33 Նախագահ Սերժ Սարգսյանի և Գարեգին Բ. ու Արամ Ա. վեհափառներուն հետ ունեցած հանդիպումներուն, Ֆրանչիսկո Պապը, միջօրեի ժամը 12:00-ին, Վատիկանի պարտեզներուն մէջ Նախագահեց «Տիեզերական Եկեղեցւոյ Վարդապետ» հռչակուած Աստուածաշնորհ Սուրբ Գրիգոր Նարեկացիի արձանին բացման արարողութեան, որուն ներկայ գտնուեցաւ 33 Նախագահ Սերժ Սարգսյան ու անոր գլխաւորած պատուիրակութեան անդամները, ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ՆՍՕՏՏ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը ու Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Գրիգոր Պետրոս Ի. Կաթողիկոս Պատրիարքը, ինչպէս նաեւ Հայ եւ Լատին եկեղեցւոյ պատկան բարձրաստիճան եկեղեցականներ:



Բացումը կատարեց Սուրբ Աթոռի Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Միքայէլ Մինասեան:

Շուրջ երկու մէթր բարձրութեամբ պրոնզէայ արձանը ձուլուած է Չէխիոյ մէջ, հեղինակը Հայաստանի ժողովրդական նկարիչ, քանդակագործ Դաւիթ Երեւանցի է, ճարտարապետը՝ Միքայէլ Հասարթեանը: Այս նախաձեռնութիւնը իրականացած է Միքայէլ Մինասեանի եւ ռուսաստանաբնակ յայտնի գործարար Արթուր Ճանիբեկեանի բարերարութեամբ ու Սուրբ Աթոռի 33 դեսպանութեան մշակոյթի բաժնի պատասխանատու Վարդան Կարապետեանի կազմակերպական ջանքերուն շնորհիւ:



Արձանը պատրաստուած էր երկու օրինակներով. մէկը տեղադրուեցաւ Վատիկանի մէջ, իսկ միւսը պիտի տեղադրուի Էջմիածնի մէջ: Վատիկանի պարտեզներուն մէջ արձանի հանդիսաւոր բացումէն ետք տեղի ունեցաւ Եփիմէնիք արարողութիւն՝ Հռոմի Սրբազան Բահանայապետ Ֆրանչիսկո Պապին, ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարքին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին մասնակցութեամբ:

Հայաստանի նախագահը այնուհետեւ այցելեց Սուրբ Աթոռի Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւն, ուր տեղի ունեցաւ պարզեւտրման արարողութիւն:

## Հրատարակուած «Եթէ Կարենայի

### Վարդապետի Թեկնածու Ըստել, Պնշտնական Թեկնածու Կ'ընտրուի»

ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան Հայաստանի Հանրապետութեան Նորընտիր 4-րդ Նախագահ Արմէն Սարգսյանի երդման արարողութենէն ետք լրագրողներու հետ զրոյցի մը ընթացքին ըսաւ, որ Նոր Նախագահը բաւական խոստումսալից է:

«Ճիշդ է՝ Հանրապետական Կուսակցութեան թեկնածուն է, բայց հանրապետական չէ: Անձը, որ որոշուած է, շատ քաղաքականացուած ալ չէ: Այդ առումով՝ կը կարծեմ, որ ճիշդ ընտրութիւն է», ըսաւ ան:

Մարգարեանի կարծիքով, Արմէն Սարգսյան կաշկանդուած չ'ըլլար իր աշխատանքին մէջ:

Անդրադառնալով Սերժ Սարգսյանի անփոխարինելի ըլլալուն, ան շեշտեց. «Մենք երբեք չ'ենք ըսած, որ ան անփոխարինելի է: Անփոխարինելի անձ չ'կայ»:

Պատասխանելով այն հարցումին, թէ ո՛վ կրնայ փոխարինել Սերժ Սարգսյանը վարչապետի պաշտօնին, Մարգարեան ըսաւ. «Եթէ մենք մեծամասնութիւն ըլլայինք, դաշնակցական թեկնածու կը ներկայացնէինք»:

Պատասխանելով մէկ այլ հարցումի մը, որ ինք 334-էն ո՞նէ ալ թեկնածու կը տեսնէ՞ վարչապետի պաշտօնին վրայ, Մարգարեան ըսաւ. «Ես Հանրապետականի գործին չեմ խառնուիր, ես մեր կուսակցութեան մասին կրնամ խօսիլ: Մենք գործընկեր ենք, բայց մեր տեսակետը մեր տեսակետն է, անոնց տեսակետն ալ իրենց տեսակետն է»:



Ինչ կը վերաբերի Սերժ Սարգսյանի այն յայտարարութեան, թէ չի հաւակնիր վարչապետի պաշտօնին, Մարգարեան ըսաւ, որ հաւակնիլ բառը բաւական առաձգական է. «Կրնաս տարբեր մեկնաբանութիւններ կատարել: Եթէ նոյնիսկ ինք հաւակնի, բայց 334-ն չ'ուզէ, ի՞նչ կ'ըլլայ, չ'ընտրուիր չ'է»: Ան ի՞ր հաւակնութիւններուն մասին խօսած է, ոչ թէ՛ 334-ի», ըսաւ Մարգարեան:

Լրագրողները անգամ մը եւս հետաքրքրուեցան, թէ ո՛վ կը տեսնէ վարչապետի պաշտօնին վրայ, Մարգարեան ըսաւ. «Ես եթէ կարենայի վարչապետի թեկնածու ընտրել, դաշնակցական թեկնածու կ'ընտրեի, եթէ չեմ կրնար՝ կը յարգեմ մեծամասնութեան տեսակետը: Չով կ'որոշեն, կ'ընտրուինք: Համախոհական համաձայնութեան պայմանագիրին մէջ գրուած է, որ վարչապետի թեկնածուն կը ներկայացնէ Հանրապետական Կուսակցութիւնը»:

Եզրափակելով Մարգարեան ըսաւ, որ հաւատարիմ կուսակցականը պէտք է ենթարկուի կուսակցութեան որոշումներուն:

ստեղծման, բաց հասարակութեան գաղափարով եւ համամարդկային արժեքներով առաջնորդուող երկրի ստեղծման՝ նշելով, որ Հայաստանի անդամակցութիւնը Եւրասիական տնտեսական միութեան եւ Եւրոպական Միութեան հետ ստորագրուած գործընկերութեան համաձայնագիրը երկրի զարգացման համար Նոր հեռանկարներ եւ կարելիութիւններ կը բանայ, իսկ կառավարման խորհրդարանական համակարգը լաւագոյն պայմաններ կը ստեղծէ այդ ուղղութեամբ:

Նորընտիր նախագահը հաստատեց, որ հայ ժողովուրդի հերոսական անցեալն ու փորձառութիւնը ցոյց կու տան, որ մեր պատմութիւնը առաւելապէս ոգիի պատմութիւն է: «Առանց այդ ոգիին եւ հաւատքին մենք կարողութիւնը չ'էինք ունենար խոր անցեալէն հասնիլ միւսէն մեր օրերը», ըսաւ Արմէն Սարգսյան՝ աւելցնելով, որ մենք տարբեր ժողովուրդներու հետ համերաշխ համակցութեան անգնահատելի փորձ ձեռք ձգած ենք ու մեր պատմութեամբ ապացուցած, որ արարող, ստեղծագործ, հաշտ եւ խաղաղ ժողովուրդ ենք: Ահա թէ ինչո՞ւ Հայաստանը հետեւողական կերպով միշտ յանձնառու կը մնայ տագնապները խաղաղ եւ բանակցային ուղիով լուծելու քաղաքականութեան, յառաջ կը տանի ցեղասպանութիւնները եւ մարդկութեան դէմ գործուած այլ յանցագործութիւնները կանխարգիլելու քաղաքականութիւն: «Այն մեծ ողբերգութիւնը, որ հայ ժողովուրդը ապրեցաւ 100 տարի առաջ՝ Մեծ եղեռնի տարիներուն, զգօնութեան դաս պէտք է ըլլայ բոլորին համար: Ուստի այսօր Ցեղասպանութեան ճանաչումն ինքնանպատակ չ'է, մարդկութեան դէմ գործուած այդ ոճիրին՝ միջազգայնօրէն ընդունումն ու դատաւարտումը կարեւոր քայլ է անոր կրկնութիւնը աշխարհին մէջ որեւէ տեղ բացառելու նպատակով», հաստատեց ան: Հանրապետութեան նախագահը նաեւ անդրադարձաւ Արցախի տագնապին, արցախցի ժողովուրդի իրաւունքներուն պաշտպանութեան կարեւորութեան, Հայաստանի մէջ փտածութեան դէմ պայքարելու անհրաժեշտութեան:

Նախագահ Սարգսյան դիտել տուաւ որ. «Մեր առաջնահերթութիւններէն մէկը պէտք է ըլլայ Հայաստան-Արցախ-Սփիւռք միասնութեան համակողմանի ամրապնդումը: Պէտք է ընենք ամէն ինչ արհեստական հակասութիւններու վերացման ու մեր հաւաքական ոյժի գիտակցման ուղղութեամբ»:

Նորընտիր նախագահը իր խօսքը եզրափակեց դիտել տալով, որ պէտք է ներդրումներ կատարուին գիտութեան, կրթութեան եւ մշակոյթի ոլորտներուն մէջ: «Վստահ եմ, որ մենք ի վիճակի ենք Հայաստանը դարձնելու գրաւիչ գործընկեր: Կը վստահեցնեմ երիտասարդներուն, որ ես միշտ պիտի ըլլամ անոնց կողքին: Պիտի կերտենք Նոր Հայաստան, հայրենիք աշխարհի ամբողջ հայութեան համար», աւարտեց ան:

Արարողութենէն անմիջապէս ետք Արմէն Սարգսյան՝ պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսյանի ընկերակցութեամբ այցելեց «Եռաբլուր» գիւղատեղական պալատին՝ յարգանքի տուրք մատուցելու Հայաստանի ազգային հերոս Վազգէն Սարգսյանի եւ հայրենիքի անկախութեան համար իրենց կենսքը զոհաբերած հայորդիներուն յիշատակին:

Աւելի ուշ վարչապետ Կարէն Կարապետեան Հայաստանի նախագահին ներկայացուց կառավարութեան իրաժարականը: Կառավարութեան անդամները պիտի շարունակեն իրենց պարտականութիւնները կատարել՝ մինչեւ Նոր կառավարութեան կազմութիւնը:



## ԳՈՐԾՈՂ ՅԱՐԱՅՈՅՑԸ ԵՒ ՄԵՆՔ

Կարո Արմենյան

Հայաստանի քաղաքական բեմի ներկայ իրականության ճշգրիտ բնորոշողում տալ կարենալու համար, անհրաժեշտ է, որ նախ եւ առաջ մենք մեզի հարց տանք, թե ի՞նչ է բնոյթը այսօր երկրի քաղաքական կեանքը տնօրինող յարացոյցին (paradigm, պարատիգմ) եւ այդ լոյսի տակ միայն փորձենք գնահատական տալ կառավարական դաշինքին ներս մեր կուսակցության ներկայ դերակատարության եւ ապագայ անելիքին:

Հաստատուած իրողութիւն է, որ Դաշնակցութիւնը առաջնորդող հանդիսացաւ սահմանադրական փոփոխութիւններու փաթեթի հետապնդման գործին մէջ: Մենք այդ մէկը ըրինք նախագահ Սերժ Սարգսեանի ամբողջական աջակցութեամբ:

Իրականութեան մէջ, այն օրէն ի վեր, որ նախագահը որոշեց իր հովանաւորութիւնը ընծայել այս գործին եւ նախաձեռնեց սահմանադրական փաթեթի ձեւաւորման աշխատանքին, ծրագիրը գործնականօրէն դուրս եկաւ մեր ձեռքէն եւ ան իւրացուեցաւ նախագահին կողմէ որպէս գործադիր իշխանութեան առաջնահերթութիւն: Նոյնքան շահեկան է այն փաստը, որ սահմանադրական փոփոխութիւններու այս շարժումը ոչ մէկ դժգոհութիւն յառաջացուց երկրի օլիգարխներու (սակաւապետներ-խմբ. «Գ.») եւ մենաշնորհի տերերու շրջանակին մէջ... Զաղաքական բեմը չայլեկոծուեցաւ երբեք: Չկար ոչ մէկ խլրտում: Ոչ մէկ հրապարակային լուրջ առարկութիւն: Ինչո՞ւ: Միթէ այդ մարդիկ չէին հասկնար, թե ի՞նչ կը կատարուէր իրենց շուրջ: Միայն մե՞նք էինք երկրի գոսն քաղաքացիները... Բնականաբար՝ Ո՞՞:

Անոնք հաստատ համոզուած էին, որ սահմանադրական այս փոփոխութիւններով յարացոյցի փոփոխութիւն տեղի պիտի չունենար, իսկ մենք իրաւամբ դրօշ պարզած էինք յարացոյցի (եւ անշուշտ տիրող համակարգի) փոփոխութեան դատը մերը ընելով եւ գայն դնելով մեր ազգային օրակարգին վրայ:

Այժմ յստակօրէն կը տեսնենք, որ Հանրապետական Կուսակցութիւնը այս հարցին մօտեցած էր յատուկ ռազմավարութեամբ: Ան սահմանադրական փոփոխութիւններու իր օրակարգին համար կենսական կը նկատէր խորհրդարանէն ներս միահեծան ոյժ ըլլալու պայմանը: Առանց այս պայմանին՝ նոր սահմանադրութիւնը կը խոստանար յարացոյցի շեշտուած յեղաշրջում յառաջ բերել եւ այդ մէկը բնականաբար կը սպառնար օլիգարխի շահերուն: Հանրապետական Կուսակցութիւնը ամեն գնով նուաճեց այդ նշանոցը, որուն շնորհիւ ան այժմ կը յաջողի ամեն յաջողոյք քայլը: Ծուտով ՀՀ նախագահի վարչապետացումով վերջնականօրէն կ'ամրագրուի մէկ հիմնական երաշխիք: Նախկին նա-

խագահական համակարգը հանգիստ կը տեղաւորուի նոր սահմանադրութեան դրոյթներուն մէջ: Եւ անոր հետեւող օրէնսդրական գործընթացը ի վերջոյ կրնայ վերածուիլ այս հոլովոյթը մշտնջենաւորող գործիքի:



Պարզ խօսքով, ներկայի յարացոյցը կը շարունակէ մնալ այն ինչ, որ էր: Այսինքն՝ նոյնը: Այսինքն՝ եութեամբ նախագահական կառավարչաձեւ մը այս վերջինէն բխող քաղաքական մշակոյթի եական գործօններով:

Այս առումով, պետք չէ գարմաւնալ, որ այսօր տեղի կ'ունենայ վերջին կերպարանափոխութիւնը: Նախագահ Սերժ Սարգսեան «կ'առաջադրուի» որպէս վարչապետի թեկնածու: Այսինքն՝ թեկնածու կը դառնայ գործող յարացոյցի ամենէն հարազատ ներկայացուցիչը միաժամանակ վարչապետի ընտրութեան խորհրդարանական գործընթացը վերածելով պարզ ձեւականութեան: Ասիկա այնքան բնական հետեւանքն է վերեւ նկարագրուած հոլովոյթին, որ եթէ յանկարծ ուրիշ անուն մը առաջադրուէր, պետք էր, որ կասկածի տակ առնէիք պատահածը եւ դիմակազերծ ընէիք նմանօրինակ բեմադրութիւնը:

Այս բոլորէն ետք, կարելի է որ հարց տանք: Պէ՞տք է այնուամենայնիւ փոփոխութիւններ ակնկալել ապագայ վարչապետ Սերժ Սարգսեանի վարչակարգէն, որուն մաս պիտի կազմէ նաեւ Դաշնակցութիւնը: Ես կը կարծեմ, թէ իրապաշտ ակնկալութիւն է համակարգի «արդիականացման» որոշ քաղաքականութիւն նախատեսել նոր կառավարութեան: Կասկած չունիմ, որ կան շարք մը բաներ, որոնք պետք է փոխուին եւ ապահովաբար պիտի փոխուին եւ Դաշնակցութիւնը (որպէս Դաշինքի անդամ) պիտի սատար հանդիսանայ այդ գործընթացին: Եւ սակայն ես դիտմամբ չակերտեցի արդիականացումը, քանի որ կը կարծեմ, թէ ան ընդհանրապէս պիտի մնայ մակերեսին վրայ: Այս յարացոյցի դարբինները անելին չեն կրնար տալ մեր երկրին: Անոնք կը հաւատան այն մաքիավելիական օրէնքին, որ կ'ըստ, թէ «իրականութիւնը պետք է փոխուի որպէսզի ան մնայ նոյնը»... Հետեւաբար իրենցմէ ծնող արդիականացումը պիտի չըլլայ խորքային: Ան պիտի չըլլայ համակարգային: Ան հիմնական լուծում պիտի չբերէ արտագաղթի հարցին: Ան պիտի չազատագրէ տնտեսութիւնը մենաշնորհային համակարգի տիրապետութենէն:

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՆԱՆԻՊՈՒՄԸ ՖՐԱՆՉԻՍԿՈՍ ՊԱՊԻՆ ՆԵՏ

Հինգշաբթի, 5 Ապրիլ 2018-ի առաւօտուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոս Վատիկանի մէջ հանդիպում մը ունեցաւ Ֆրանչիսկոս պապին հետ: Արամ Ա. Կաթողիկոս նախ շնորհակալութիւն յայտնեց պապին՝ Հայոց Յեղասպանութեան ճանաչման, ինչպէս նաեւ Լիբանանի գծով իր ցուցաբերած զօրակցութեան համար: Ապա վեհափառ հայրապետը հետեւեալ հարցերը յանձնեց պապին ազնիւ ուշադրութեան. -



1) Պայմաններու բերումով, եկեղեցիներ Գրիգորեան եւ Յուլեան տօնացոյցերու հետեւելով, քրիստոսի յարութեան տօնը տարբեր թուականներու կը նշեն: Նկատի ունենալով, որ յիշեալ հարցը աստուածաբանական բնոյթ չունի, այլ միայն տոմարական է, անհրաժեշտ է, որ եկեղեցիներու միջեւ խորհրդակցաբար մէկ թուական ճշդուի՝ իբրեւ եկեղեցւոյ միութեան արտայայտութիւն:

2) Ներկայ ժամանակներու ընկերաբարոյական հարցերը սկսած են ներքին բաժանումներ յառաջացնել թե՛ եկեղեցիներու մէջ, եւ թե՛ եկեղեցիներու միջեւ: Անհրաժեշտ է, որ եկեղեցիներ առաջնահերթութիւն տան յիշեալ հարցերուն, քան անցեալէն ժառանգուած դաւանաբանական տարբերութիւններուն, որոնք փաստօրէն սկսած են դառնալ ժամանակավրէպ:

3) Միջկրօնական յարաբերութիւնը ընդհանրապէս, քրիստոնէայ-իսլամ կապը մասնաւորաբար, նաեւ՝ երկխօսութիւնը եւ գործակցութիւնը դարձած են հրամայական: Սպասելի է, որ բոլոր եկեղեցիները յատուկ կարեւորութիւն ընծայեն այս մարզին՝ միջեկեղեցական յարաբերութեան եւ աստուածաբանական երկխօսութեան ծիրին մէջ:

4) Միջին Արեւելքի մէջ քրիստոնէական ներկայութիւնը սկսած է նուազիլ: Սպասելի է, որ Վատիկան յատուկ ուշադրութիւն ընծայէ շրջանին մէջ քրիստոնէական ներկայութեան եւ քրիստոնէայ-իսլամ գոյակցութեան:

Սրբազան քահանայապետը համաձայն գտնուեցաւ վեհափառ հայրապետին մատնանշած հարցերուն եւ յայտնեց, որ այս ուղղութեամբ աշխատանք կը տարուի Վատիկանի կողմէ՝ նկատի ունենալով խնդրոյ առարկայ հարցերուն ներկայացուցած այժմեականութիւնը եւ կարեւորութիւնը:

Ան պիտի չկարողանայ ստեղծել անհրաժեշտ թիւով իրական աշխատատեղեր: Ան պիտի չկարողանայ ծնունդ տալ որակաւոր տնտեսական աճի: Դատելով վերջին բազմաթիւ տարիներու փորձէն, մենք ստիպուած ենք թերահաւատ ըլլալու բոլոր այս հրամայականներու կապակցութեամբ եւ անշուշտ ի սրտէ կը մաղթենք սիսլած ըլլալ: Հիմնուած անցեալի փորձին վրայ,

Հանրապետական Կուսակցութիւնը իր այսօրուան մեծամասնական դիրքերէն ի վիճակի չէ այդ ուստիւնը իրագործելու:

Այդ բանը պիտի ընէ Դաշնակցութիւնը: Ես համոզուած եմ, որ Դաշնակցութիւնը չի կրնար լճանալ այս յարացոյցին մէջ եւ հետ: Մեր երկիրը ի վերջոյ պիտի յարթէ ինքզինք եւ մենք պիտի ըլլանք այդ վճռական կռիւնը առաջնորդող:

**Յայտարարութիւն**

ՀԱՐԱՄ -ի Ծաւար Քրիսեան Բարաթի սրահի յանձնախումբը կազմակերպած է **Չումպայի դասընթաց**

Մարզչուի ունենալով Սր. Հայկան Տեկիբնէնէան

**ZUMBA**  
fitness

Արձանագրութեան եւ այլ մանրամասնութեան համար վանճախարկ հետեւեալ հեռախօսահամարին: **0956757025**



Ապրիլ 10-ի այս օրը, 26 տարի առաջ, Ատրպեյճանի իշխանութիւնները գործադրեցին բարբարոսական ահաւորութեամբ հակահայ սպանող մը, որ անլուրդ յուշարարներէն մէկը դարձաւ Արցախի հայութեան ազգային արդար պահանջները բրտօրէն խեղդելու ուղին ընտրած Պաքուի վարիչներուն ցեղասպանական վարքագիծին...

Արցախի Մարտակերտ շրջանի հայաբնակ Մարաղա գիւղը օր-ցերեկով ենթարկուեցաւ պետականօրէն ծրագրուած ու գործադրուած սպանոյթի:

Մեծն Բրիտանիոյ Լորտերու Պալատին երեւելի անդամներէն Պարնուի Զարուայն Զոքս օրին անկաշառ վկան հանդիսացաւ Մարաղայի կոտորածին: Արցախեան Ազատամարտի արդարադատ պոռթկումը արեան մէջ խեղդելու ատրպեյճանական եղեռնագործութեան սեւ էջերուն շարքին իր արիւնտ էջը արձանագրած Մարաղայի կոտորածին մասին, օրին, Լէյտի Զ. Զոքս հետեւեալ վկայութիւնը ներկայացուց Մեծն Բրիտանիոյ Լորտերու Պալատին մէջ.

«Այն, ինչ որ մենք տեսանք՝ նկարագրութեան ենթակայ չէ: Գիւղը ամբողջովին ավերուած էր: Մարդիկ թաղուած էին գոհուածներին, ատելի ճիւղ՝ այն, ինչ հնարաւոր էր թաղել - տանջամահ արուած, կենդանի այրուած, կտրտուած կամ սողոցուած դիակի մասեր: Մի մասին թաղել էին նախորդ օրը՝ նկարահանելու համար նրանք հանեցինք, թէ-նի հասկանում էինք, թէ ինչքան ծանր է հայերի համար: Այդ օրերին Մարաղայում նկարահանուածը փաստում է այդտեղ իրագործուած սոսկալի կոտորածի մասին՝ գըլ-խատուած ու կտրտուած դիակներ, երեխաների դիակներ, արիւնտս հող եւ մարմնի մասեր, որտեղ սողցել էին նրանք:

Մենք տեսանք արիւնտուած մանգաղներ, որոնցով կատարել էին այդ եղերագործութիւնը, հաւանաբար դրանք պետք էր վերցնել մեր հետ՝ որպէս վկայութիւն, բայց ես դա չկարողացայ: Բնակիչներին սպանելուց յետոյ ատրպեյճանցիները թալանել էին այրել էին գիւղը: Չի-նուորներէրից յետոյ յայտնուել էին քաղաքացիներ եւ շարունակել թալանելը: Մենք տեսանք մի քանի լիքը լըցուած պայուսակներ, որ դիակապտիչները չէին հասցրել տանել»:

Ահա այսպէ՛ս Ատրպեյճանի ցեղասպանական վարքագիծին գոհը դարձաւ Արցախի հայոց հինաւուրց Մարաղան:

Մարաղա հայաբնակ գիւղ էր Մարտակերտի շրջանին մէջ, հայկական բարգաւաճ ասան էր Գանձակ-Ստեփանակերտ մայրուղիին վրայ եւ կը հանդիսանար Լեռնային Ղարաբաղի դարպասը: Մարաղացիները աւանդապահ, հիւրասեր եւ հայրենի բնութեան կառչած հայեր էին, որոնք հիմնականին մէջ բրինձ կը մշակէին, ունէին թուզի ու նուռի այգիներ, պարտէզներ: Մարաղան հայութեան տուած է ծանօթ գիտնականներ, երաժիշտներ, գրողներ: 1989-ի մարտի 1-ին Մարաղան կը հաշուէր 4660 շունչ մարդ:

Մարաղան անցեալ դարասկիզ-

## 10 Ապրիլ 1992. Մարաղայի Կոտորածը. ԱՏՐՊԵՅՆԱԻ ՀԱՎԱՀԱՅ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒ ԱՐՅԱՆԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ



Նազարեթ Պերպերեան

բին երկու անգամ՝ 1918-ին եւ 1920-21-ին թուրքերը գրաւած, սպանոյթ ենթարկած ու ավերած են: Այնուհետեւ մարաղացիները միշտ ալ ապրած են զգուշաւոր՝ իրենց թուրքագրի դրացիներուն նկատմամբ: Իսկ 1988 թուին, Ղարաբաղեան Շարժումի առաջին իսկ օրերէն, Մարաղան եղաւ վտանգի առջեւ կանգնած Արցախի առաջին ամրոցներէն մէկը: Մարաղան յայտնուեցաւ կրակի մէջ: Թուրքերը գիւղը ավերելու սկզբնական փորձ մը կատարեցին 1991-ի Մայիսին, բայց գիւղի ֆետայի ազատամարտիկները կրցան քաջաբար ետ շարտել նախա-յարձակները:

Սեպտեմբեր 1991-ին Արցախի հայութիւնը հռչակեց իր անկախութիւնը՝ Խորհրդային Միութեան կազմին մէջ մնալով եւ խորհրդային սահմանադրական օրէնքներուն վրայ հիմնուելով: Ինքնապաշտպանական եւ ազգային-ազատագրական պայքարի դաշտ նետուած Արցախի հայութիւնը տենդագին լծուեցաւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական հիմերու եւ կառոյցներու հաստատման ու ամրապնդման: Բայց Արցախի հայութեան ընդհանուր ապահովութիւնը ծայր աստիճան ծանրացաւ Դեկտեմբեր 1991-ին, երբ տեղի ունեցաւ փլուզուած Խորհրդային Միութեան պաշտօնական կազմալուծումը՝ ազատ արձակելով եւ անտառի օրէնքի քմայքին յանձնելով Չարիքի Կայսրութեան մականին տակ 70 տարի գերեզմարուած ազգերն ու ժողովուրդները:

Աշխարհաքաղաքական այդ շրջադարձային բախտորոշ պահուն նորանկախ Ատրպեյճանի Հանրապետութիւնը ի գործ դրաւ հայոց հինաւուրց հողին եւ շէներուն հայաթափումն ու թրքացումը ամբողջացնելու «ազգային մաքրագրում» իր ցեղասպանական ծրագիրը:

Շուշին դեռ ազատագրուած չէր եւ ամբողջ Արցախը, ինչպէս եւ մայր Հայաստանին հետ կապի բոլոր անցքերը ենթակայ էին ատրպեյճանեան գործերու հակակշռին: Հայակեր թշնամիին դէմ ապստամբած Արցախի ազատամարտիկ հայութիւնը ամենուր եւ ամէն օր կը կրէր մահ սփռող հետեւանքները անդադրում հրետանակրծութեան:

Համատարած ռմբակոծումներու եւ գրահամեքենաներով ու ծանր գէներով յարձակումներու այդ օրհասական պատերազմին մէջ տեղի ունեցաւ Մարաղայի կոտորածը:

1992 թուականի Ապրիլ 10-ի առաւօտեան ժամը 5:00-ին Մարաղա յանկարծ թիրախ դարձաւ անսխալնթացօրէն լայն ծաւալի հրետակոծութեան: Կեսօրուան մօտ, ատրպեյճանական «Գուրթուլուշ»

գործաւոր (1000 զինուոր), 20 գրահամեքենայի հետ, մտաւ գիւղ: Հայոց պաշտպանական ուժերը (60 ազատամարտիկ) տեսնելով, որ ի վիճակի պիտի չըլլան դիմադրելու թշնամիի անհաւասար գերագանց ոյժին, նահանջեցին՝ զգուշացնելով գիւղի բնակիչներուն, որ միասին նահանջեն կամ թաքստոցները ապաստանին: Հիմնական բնակչու-



թիւնը հեռացաւ գիւղէն: Իսկ ծերունիները եւ հաշմանդամները պատրաստուեցան նկուղները: Յաջորդ օրը ազատամարտիկները գիւղը ետ գրաւեցին, բայց գտան 57 խաղաղ բնակիչի դիակ. - ոմանք գլխատուած էին, ուրիշներ հրկիզուած, մորթուած կամ աչքերը հանուած... Հոս ու հոն նետուած էին մարդկային մարմնի բառացիօրէն սողոցուած մասեր՝ ձեռք ու ոտք եւ...

Ըստ Մեծն Բրիտանիոյ Լորտերու Պալատի նախկին փոխ-խօսնակ Լէյտի Զ. Զոքսին՝ սպանուած էին ոչ-պակաս քան 45 հայեր: Ըստ հայկական անուանական ցանկին՝ զոհուած էր 57 եւ գերեզմարուած 45 խաղաղ բնակիչ: Գերիներու շարքին էին՝ 9 երեխաներ, 18 կին, 3 տարեց եւ մէկ կոյր (այս տուեալները հաստատուած են Միջազգային «Helsinki Watch» իրաւապաշտպան կազմակերպութեան եւ Զ. Զոքսի կողմէ):

Շաբաթ մը յետոյ Մարաղան ենթարկուեցաւ նոր յարձակումի մը, որուն հետեւանքով բնակչութիւնը վերջնականապէս հեռացաւ իր հայրենի օրրանէն: Ընդհանուր առմամբ՝ ատրպեյճանեան բարբարոսական եղեռնագործութեան Մարաղան տուաւ 90 նահատակ, տարբեր աստիճանի ծանր վերքեր ստացան 37 հոգիներ, որոնց շարքին 21 կին եւ 6 երեխայ:

Այդպէ՛ս հայաթափուեցաւ եւ վերջնականապէս ատրպեյճանական գրաւման տակ ինկաւ Մարաղան: Իսկ Մարաղայի կոտորածը իրագործած ըլլալուն համար «Գուրթուլուշ» գումարտակի հրամանատար Շահին Թալիբ օղլի Թագիւնը ստացաւ «Ատրպեյճանի Ազգային Հերոս» ի կոչում:

Մարաղայի կոտորածին քաղաքական գնահատումը կատարելով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութիւնը ի լուր աշխարհին յայտարարեց.

«Ատրպեյճանի տարածքում

հայ ազգաբնակչութեան շարդերի եւ էթնիկ գոտումների նկատմամբ միջազգային հանրութեան կողմից համարժեք քաղաքական եւ իրաւական գնահատականի բացակայութիւնն էր, որ ուղի հարթեց Մարաղա գիւղում ատրպեյճանական բնակչի կողմից ռազմական յանցագործութեան իրականացման համար:

«Այդ յանցագործութիւնների անպատժելիութիւնը բարենպաստ հող է ստեղծել Ատրպեյճանում հայերի եւ ողջ հայկականի նկատմամբ հիւանդագին ատելութեան արմատաւորման, այլատեսացութեան, անհանդուրժողականութեան եւ ռազմատենչութեան սանձարձակ քարոզչութեան համար:

«Այդ արատաւոր շրջանակը ծեղքելու եւ հետագայում նմանատիպ յանցագործութիւնների հնարաւորութիւնը կանխելու նպատակով՝ Մարաղայի կոտորածը պետք է դատապարտուի միջազգային հանրութեան կողմից, իսկ նրա կազմակերպիչներն ու իրագործողները՝ պատժուեն»:

Մարաղայի կոտորածի ոգեկոչման նուիրուած յուշատետրի այս հակիրճ էջը կ'եզրափակենք «Ազգ.am»-ի 10 Ապրիլ 2010-ի իրապարակումէն քաղուած հետեւեալ վկայութեամբ.

Մարաղայի ողբերգութիւնից հրաշքով փրկուածներէրից Վալյա Խաչիկեան հետագայում յիշում էր, որ գիւղի ռմբակոծութիւնը սկսուեց Ապրիլի 9-ի երեկոյեան: «Արկերը պայթում էին գրեթէ ամէն վայրկեան: Գիւղում 3000 արկ է պայթել: Այդ ժամանակ ես եւ ամուսինս գտնուում էինք նկուղում, ուր ապրում էինք արդէն երեք տարի: Նրանք, ովքեր չկարողացան լքել գիւղը, մորթուեցին, այրուեցին, գերեզմարուեցին: Իսկ փախչողներին դժոխային ծանապարհ էր սպասում ռմբակոծութիւնների ներքոյ:

«Սարգսեան Կարինէն պատմում էր, որ Մարաղայի ուղղութեամբ առաջին կրակոցները սկսուել էին Յունուարին: Ապրիլին այդ կրակոցները շատացան, ու մենք թաքնուեցինք նկուղում:

Մի քանի օր անց տեսանք, որ ատրպեյճանցիները գիւղում են: Ես լսում էի, թէ ինչպէ՛ս էր մի կին աղաչում, որ իր երեխաներին ձեռք չտան: Նրա գլխին հարուածեցին, եւ նա ուշագնաց ընկաւ: Յետոյ ես իմացայ նրա անունը՝ Չապէլ:

Պարզուեց, որ երեխաների աչքի առաջ մայրը սպաննուել էր դանկի անիւների տակ: Նրանք իմ երեխաներին էլ գողացան, եւ կորցրեցի ու էլ նրանց չտեսայ: Ինձ գցեցին «Ժիգուլի» մեքենայի մէջ ու տարան Բարդա: Չարթեցի Բարդայի ոստիկանութեան շէնքում... Է ոչինչ չեմ յիշում, յիշում եմ մարդկանց լացը, շատերը խելագարութիւնից ոռնում էին:

«Զրոյս ու նրա աղջկան մերկացրին, բենզին լցրեցին ու վառեցին: Նոյն կերպ սպաննեցին Փառանձեմին, Վարդանուշին, Բագրատին, Ժորային: Այդ օրը Մարաղայում բազմաթիւ անմեղ մարդիկ մահացան», յիշում էր Նուշիկ Աղաջանեանը»:



### ՀԱՅ ՂԵՎԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՆ, ԱՆՃԵԱԸ, ԱՊԱՎԱՆ

Թային Սուշեան

Միևնիսի համալսարանի Մերձավոր Արեւելքի ուսումնասիրութիւններու հիմնարկի Թուրքիոյ եւ Օսմանեան Կայսրութեան պատմութեան բաժնի դասախօս, դոկտոր Թային Սուշեան «Յայերը ժամանակակից Թուրքիոյ մէջ» վերնագիրով իր անգլերէն գիրքին մէջ, որ կը թարգմանուի նաեւ թրքերէնի, վերլուծութեան ենթարկած է 1944-51 թուականներուն պատերազմական ընտրութիւններուն ճգնաժամը: Սուշեան վերջին գարգացումներուն լոյսին տակ «Ակօս»ին ներկայացուցած է իր գնահատականը:

«1944-51 թուականներուն Արսլանեանի պատճառով յառաջացած ճրգնաժամը ուսումնասիրելուս ընթացքին, պէտք էր անդրադառնալ նաեւ վերջին տարիներուն գրեթէ կրկնուող իրադարձութիւններուն եւ անոնց պատճառով յառաջացած զգացումներուն եւ մտածումներուն:

Այդ ժամանակ առաջին անգամ սկսայ մտածել այն բանի մասին, թէ ի՞նչ է եկեղեցին, պատրիարքի պաշտօնը, հայ ղեկավարութիւնը, թէ ի՞նչ կը ներառէ ան, եւ ինչպէս պէտք է ըլլայ: Ես համոզուած եմ, որ եկեղեցին սուրբ վայր է, իսկ պատերազմները՝ կրօնական կառոյց: Ժամանակի ընթացքին, սակայն, հասկըցայ, որ պետութեան կողմէ յօրինուած այլ հեքիաթ մըն ալ գոյութիւն ունի. այնպէս, ինչպէս կը հաւատայինք, որ մենք «փոքրամասնութիւն» ենք, նոյն ձեւով ալ կը հաւատայինք, որ մերինները աշխարհիկ են, իսկ պատերազմները՝ «կրօնական»: Սակայն եկուր տես որ պատմութիւնը այլ բան ցոյց կու տայ: Եթէ նոյնիսկ ընդունիք, որ բժշկական խորհուրդը ապացուցած է, որ պատրիարքը չի կրնար ղեկավարել, այնուամենայնիւ տարբեր ժամանակաշրջաններու, յատկապէս 19-րդ դարու առաջին կէսին սկսեալ, արեւելեան շրջանները գտնուող հայկական գիւղերու մէջ՝ Զասանալը, Գիբրալը, Ռեշրթալը, Պալապալը քիւրտ աշիրթներու կողմէն իրականացած արհաւիրքներուն լուծում գտնել փորձելով, պատրիարքը համայնքի հարցերուն հասնող ու վերջինիս համար պատասխանատու համարուող անձն էր: 1847-էն սկսեալ քաղաքացիներու մասնակցութիւնը աստիճանաբար կ'աւելնար, 1860-էն ետք ի յայտ կու գար համակարգ մը, որ կը կազմակերպէր ընտրութիւններ, յանձնաժողովներ, մէկը միւսին վերահսկող համակարգեր, իսկ պատրիարքն ալ կը վերածուէր այդ յանձնաժողովներու ընդունած որոշումները կատարող անձին: Ասոնք չեմ ըսեր որեւէ ժամանակաշրջան կամ ոեւէ ղեկավար իտեալականացնելու համար, չեմ պնդեր նաեւ, որ ան անսխալ գործող համակարգ մըն էր, բայց այսօր տեղի ունեցող դէպքերուն անդրադառնալով հանգիստ կրնանք ըսել, որ այդ ժամանակաշրջանին ան գոնէ ղեկավար կառոյց էր: Ի հարկէ կրնանք աւելցնել նաեւ, որ այդ օրերուն օսմանեան ղեկավարութիւնը հայութեան կը նայէր որպէս սեփական ժողովուրդ եւ որպէս կայսերական ոյժ ու գործնական առումով անոր բոլոր հարցերուն չէր միջամտեր: Այդ օրերուն պարզ էր, թէ որու կը պատկանէր վերջին խօսքը:

**ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆՆ ՈՒ ՇՆՈՐՀԵ ՊԱՏՐԻԱՐԷՔ՝ ՈՐՂԵՍ ԱՌԱՋՆՈՐՈՒՆԵՐ**  
Անոնց ղեկավարութեան ընթացքին ընտանեկան իրաւունքէն սկսելով, հասարակական անադոյթներ հասնելով՝ բոլոր հարցերը պատրիարքութեան մէջ կը լուծուէր: Զիմա կ'ըսեք՝ ատիկա արդէն պատմութիւն է, այսօր ի՞նչ նշանակութիւն կրնայ ունենալ: Այն միջավայրին մէջ, ուր ծնած եմ, այս ամէնը կրնայ ըլլալ տեղի չէին ունենար, բայց բոլորս գիտէինք Խաչատուրեան ու Շնորհք պատրիարքները, գիտէինք, թէ այս անունները ինչ կը ներկայացնեն, ինչ նշանակութիւն ունին անոնք հայերուս համար: Անոնք համայնքի պատասխանատուութիւնը կրող պատրիարքութեան անադոյթներու ժառանգութիւնը պահողներն էին, եւ անոնք այդ ոյժը կը վերցնէին կառոյցի իրաւասութիւններէն ու պատմութենէն: Այս ամէնը չեմ ըսեր անոր համար, որ այս անուններէն կուռք ստեղծենք, անշուշտ խօսքը ղեկավար կառոյցի մասին է: Սակայն եթէ հաշուի առնենք նաեւ այն, որ 1923-ի վերջերը հայ ղեկավարութիւնն ու հասարակութիւնը կ'ապրէին դժուար ու ժըխտողական ժամանակաշրջան մը, ապա հանգիստ կրնանք ըսել, որ այս մարդիկը ներկայիս իրենց նմանը չունեցող առաջնորդներ եղած են: Սխալ կ'ըլլայ նաեւ կարծել, որ պետութիւնը չի գիտեր, թէ պատրիարքութիւնը պատմականօրէն ինչպիսի ղեկավար կառոյց կը ներկայացնէ: Այս շրջագիծին մէջ պէտք է մտածել նաեւ այն մասին, թէ ինչպէ՞ս 1922-ին Չաւեն պատերազմը ստիպուած եղաւ փախստականի մը նման փախչիլ այս երկրէն:

**ԱՆՐԱՍՏԵՑ ԶԵ ՍՊԱՍԵԼ «ՕՐԵՆՔԻՆ»**

Միւս կողմէն ալ եթէ ըսեք՝ «Այո՛, այդպէս է, սակայն այդ ժամանակէն շատ ջուր հոսած է, ուրիշ կառոյցներու, ուրիշ համակարգերու անհրաժեշտութիւն կայ», շատ իրաւացի պահանջ կ'ըլլայ: «Պետութեան դրածոյ

<http://www.agos.com.tr/tr/yazi/20420/ermeni-idaresi-dun-bugun-yarin>  
(Նիւթը թարգմանուած է որոշ կրճատումներով-Ակունքի խմբ.)  
Թարգմանեց Անի Մելքոնեան  
Արեւմտահայերէնի վերածեց Շաղիկ Սրուբեան  
Շար. 12 14

**ՀԱՐՑԱԶԹՈՅ**

**Ռենա Տադրիվերէնեան՝  
Նալէպահայ փառանդաւոր երգչուհին  
Jazz-ի աշխարհին մէջ**

**Յալէպի երաժշտական միջավայրին մէջ շատեր հասակ առած, ծաղկած, ապա նաեւ թռիչք առնելով մուտք գործած են այլ միջավայրեր: Ռենա Տադրիվերէնեան անոնցմէ մէկն է: Իւրայատուկ ոճ եւ ձայն ունեցող այս երգչուհին նորաւոր յաջողութիւններ կը նուաճէ ու նոր որակով կը ներկայանայ զանազան բեմեր:**

**«Գանձասար» մտերմիկ հարցազրոյց մը ունեցաւ Ռենայի հետ, զոր կը ներկայացնենք ստորեւ.**

**«Գանձասար»- Ե՞րբ եւ ինչպէ՞ս մուտք գործեցիք երաժշտական աշխարհ:**

**«Ռ.Տ.»-** Փոքր տարիքէս բեմ բարձրանալը հաճոյք էր ինծի համար, որովհետեւ հայրս երգիչ էր արդէն: Առաջին անգամ մեծ բեմահարթակ բարձրացայ 8 տարեկանիս, երբ հայրս մենահամերգ ունէր



Կրթասիրաց վարժարանի սրահէն ներս «Նիքապէթ Ֆանսանին» խումբին հետ, Վաչէ Երամեանի ղեկավարութեամբ: Այնտեղ «Beathles» խումբի երգերէն 2 կտոր երգեցի: Յետոյ, Աւստրալիա տեղափոխուելէս ետք, երկար ատեն հեռու մնացի այս աշխարհէն: 22 տարեկանիս, երբ վերադարձայ Յալէպ, վերսկսայ երգել հայկական մէր ակումբներու ձեռնարկներուն, հետագային նաեւ «Սպենդիարեան» եւ «Չուարթնգ» երգչախումբերուն մէջ: Յետոյ երգելու ունակութիւնս օր օր գարգացուցի: Յալէպի մէջ Jazz-ի խումբ մը կազմեցինք ու հանդես եկանք օտար դեսպանատուներու կազմակերպած ձեռնարկներուն եւ փառատօներուն:

**«Գ.»- Ձեր նախասիրած երաժշտական ժանրը Jazz-ն է: Ներկայիս երեւան կ'ապրիք, օրին հալէպի մէջ ալ խումբ կազմած էք: Ի՞նչ է տարբերութիւնը հայաստանեան եւ այլ երաժշտական միջավայրերուն:**

**«Ռ.Տ.»-** Նախ Jazz ժանրով սկըսայ, յետոյ անցայ blues, soul, funk, R&B եւ այս վերջերս նոյնիսկ rock ժանրին: Յալէպի մէջ քիչ մը դժուար էր Jazz-ը տարածելը, բայց մենք (իմ խումբին հետ) բաւական մեծ աշխատանք տարինք մարդոց հրամցնելու այս ոճը:

Երեւանի մէջ աւելի դիւրին էր այս մէկը, որովհետեւ երաժշտական ոլորտը աւելի հասուն ու առողջ վիճակի մէջ է այնտեղ:

Այստեղ շատ աւելի լայն միջավայր ունեցայ, որովհետեւ իւրայատուկութիւն ունէի իբր երգչուհի: Երեւանի մէջ, չափազանցած չեմ ըլլար

երթ ըսեմ, միակ երգչուհին էի, որ blues ոճի խումբ ունէի:

**«Գ.»-Վերջերս մասնակցեցաք THE VOICE երաժշտական մրցոյթին: Ինչ տպաւորութեամբ վերադարձաք:**

**«Ռ.Տ.»-** The Voice երաժշտական ծրագիրը ինծի համար շատ օգտակար փորձառութիւն մը եղաւ: Առիթ ունեցայ շատ տաղանդաւոր երաժիշտներու ու երգիչներու ծանօթանալու եւ փորձառութիւն շահելու: Ինծի համար կեանքը միշտ պէտք է ըլլայ նորութիւններով եւ շինիչ փորձառութիւններով լեցուն:

Ու տարիքը երբեք արգելք պէտք չէ ըլլայ այս մէկը իրականացնելու համար:

**«Գ.»-Յետաջրբական է իմանալ ձեր կարծիքը հայկական Jazz երաժշտութեան մասին:**

**«Ռ.Տ.»-** Jazz-ը Երեւանի մէջ միշտ ալ գոյութիւն ունեցած է ու տարուէ տարի կը գարգանայ: Փափաքելի է որ աւելի լայն առիթներ ընծայուին ու Երեւանի տաղանդաւոր երաժիշտները շփում ունենան օտարերկրացի jazz երաժիշտներու հետ: Այս ուղղութեամբ բաւական աշխատանք ու ծրագիր գոյութիւն ունի: Օտար հանրածանօթ երաժիշտներ յաճախ Յայաստան ելոյթներու կը հրաւիրուին: Յոյսով եմ, որ հակառակ ուղղութեամբ ալ նման ծրագիրներ կ'իրագործուին, որովհետեւ երաժշտութիւնը կը գարգանայ բաժնեկցելով:

**«Գ.»- Ինչ բանի կը ձգտիք երաժշտական ձեր ասպարէզին մէջ:**

**«Ռ.Տ.»-** Երաժշտութիւնն ու երգը ինծի համար սեր ու հաճոյք են, ոչ թէ գործ: Անոր համար ալ կը կարծեմ, որ ես իմ նպատակիս հասած եմ Երեւանի մէջ շաբաթական քանի մը օր համերգներ ու բաւական երկրպագուներ եւ հետեւողներ ունենալով:

Ունիմ մէկ այլ ձգտում մը, որուն առաջին քայլերը կ'առնեմ արդէն: Նպատակս է նոր սերունդի տաղանդաւոր երաժիշտներուն համար աճելու, գարգանալու տարածք ստեղծել ու արուեստը բաժնեկցիլ անոնց հետ:

Երեւանեան գանազան ակումբներու (pubs/clubs) մէջ կը կազմակերպեմ (jam session), ուր կը հրաւիրեմ՝ իրարու ծանօթանալու, նուազելու եւ գործակցութեան առիթներ ստեղծելու:

Մօտօրէն ռատիոյի հաղորդում մը պիտի սկսիմ այս նիւթին շուրջ:

Այս ամիս ստացայ Van music awards լաւագոյն երգի (hit song) մրցանակը՝ իմ յօրինած երգին համար, որ ձայնագրած ու տեսահոլովակի ալ վերածած ենք: Ծատ ուրախ ու հպարտ եմ այս մրցանակով, որովհետեւ անուսս ինչեք անուանի ու յաջողակ շատ մը երգիչներու կողքին:

**«Գ.»-Յաջողութիւն կը մաղթենք երաժշտական ձեր երթին:**



# ՌԱՖՖԻՆ ՈՒ ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ



Մարիա Գարիբյան

Իրաւացի էր հանդիսատեւը այդքան երկար ու ջերմ ծափող-ջոյններով սրահը թնդացնելու... Իրաւացի էին մեր նախնիները իրենց ջամբած ազգային ու հայրենասիրական դաստիարակութեան մէջ: Իրաւացի էին մեր ազգայնաշունչ միութիւնները իրենց

կը կարողային մեր թշնամիին, երբում տալով կրարատի վեհանձնութեամբ տեր դառնալ մեր անցեալին ու ֆետայիներու թողած աւանդով շարունակել հետապնդել մեր Դատը: Երիտասարդներու եւ պատանիներու ոգեւորութիւնը, խանդավառութիւնը, ճիշդ բառե-



ընտրած ուղիին մէջ: Ռաֆֆիին համար էին բարձր գնահատանքի այդ ծափողջոյնները:

րով երգեցողութիւնն ու ապրումները կը վանէին ամէն մտահոգութիւն նոր սերունդին մէջ հայրենասիրական կամ ազգասիրական զգացումներու կրակը շիջանած ըլլալու վերաբերեալ:

Իւրայատուկ էր ՍԵՄ-ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ Ռաֆֆի Զալեպեանի երգահանդեսը, ոչ միայն իր ազգային, հայրենասիրական ու յեղափոխական երգացանկով, այլ մանաւանդ երգերուն ճիշդ կատարումով: Ինչքան երգեր ունիւք, որոնք ժամանակի ընթացքին տարբեր պատճառներով սխալ երգուած են ու այդ սխալները ընդհանրանալով հետզհետէ քարացած: Ռաֆֆի փշրեց սխալի այդ քարերը եւ իր երգերով դաստիարակչական գործ կատարեց:



Սրահի մեծամասնութիւնը երիտասարդներ ու պատանիներ էին, կային նաեւ փոքրիկներ, որոնց թաթիկներով բարձրացած մեր եռագոյնը այնքան գեղեցիկ կը ծածանէր, որ դոյզն կասկած անգամ չէր ձգեր, որ այս սերունդը պիտի շարունակէ սկսուած գործը, պիտի շարունակէ այն առաքելութիւնը, որ հարիւրամեակէ մը ի վեր հայրենիքի թէ սփիւռքի մէջ կը ծաւալէ:

Յատկապէս ազդեցիկ էր երգահանդեսի աւարտի այն պահը, երբ հարիւրաւոր երիտասարդներ մէկ հոգիի նման ոտքի կեցան երգեցին հալեպահայ հերոս՝ Նահատակ Ռաֆֆի Պապեանի յիշատակին նուիրուած երգը, որ իրականութեան մէջ սովորական երգէ մը շատ աւելին էր, խոստում էր ու պատգամ:

Երիտասարդներն ու պատանիները, որոնք անգիր գիտէին երգուած բոլոր երգերը, սրահը թնդացնող իրենց ձայներով ոչ թէ կ'երգէին այլեւ ասպարեզ

Թող Ռաֆֆի Զալեպեանին նման հայ երգի ու երաժշտութեան նկատմամբ այսքան բծախնդրութիւն ու սեր տածող հայորդիներուն թիւը բազմանայ:

Թող մեր նոր սերունդներու ազգասիրութիւնը այսպէս ջերմ մնայ ու ջահը փոխանցուի անընդմէջ:

Թող կրկին հպարտանայ հալեպահայութիւնը իր պատրաստած ուժերով:

## Նշմար

# ԵՐԿՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

Ականջս *ռատիրոյի*, կը հետեւիմ առաւօտեան ծրագիրին, որուն մեծ մասը նախորդ օրուան կրկնութիւնն է: Որքան տխուր է հանրային ձայնասփիւռի «Ապրելու բանաձեւ» յայտագիրը, ուր կը ներկայացուի նահատակ գիւնուորի մը կեանքը, անոր ծնողներէն, իր մանկութենէն ու պատանեկութենէն, մինչեւ գիւնակրչութիւն, մինչեւ գիւնառայութիւն եւ ապա... Նահատակութիւն, ամենայն մանրամասնութեամբ: Զերոսներ են բոլորն ալ, որոնք իրենց մատողաշ կեանքը դրած են հայրենիքի զոհասեղանին ու անմահացած: Աչքերս կ'արցունքոտին: Եւ այսպէս, ամէն շաբաթ նոր հերոս նահատակ մը կը ներկայացուի. որքա՞ն հարուստ է այս երկիրը իր նահատակներով:



Ծրագիրը հազիւ աւարտած, այս անգամ առաջինին հակառակ ու անոր դառնութիւնը չքացնող, յաջորդ յայտագիրը՝ որ կը կրէ «Ապագայի անուններ» վերնագիրը եւ նուիրուած կ'ըլլայ պատանի տաղանդներու ներկայացումին:

Այս որքան տաղանդաւորներ ունիւք, նահատակներուն բացը լեցնողներ: Տաղանդներ կ'ըսեմ, որովհետեւ ներկայացուող մանուկներ ու հազիւ պատանեկութեան շեմին ոտք դրած տղաք ու աղջիկներ, արդէն ոչ միայն հայաստանեան չափանիշով, այլեւ միջազգային մրցանակներ շահած, միջազգային չափանիշով տաղանդներ են, արուեստի զանազան բնագաւառներուն մէջ իրենց բնածին շնորհները Զայաստանի մէջ կոփած ու փայլեցուցած, Զայաստանի անունը կը բարձրացնեն աշխարհով մէկ:

Այս որքա՞ն արգասաբեր է հայրենի հողը: Այս որքա՞ն կենդանի է իրենց մէջ հայու արմատներէն հասած ոյժը:

Զանի անգամ ըսած եմ ու նորէն կ'ըսեմ, զարմանքով ու հպարտութեամբ, որ Զայաստանի բնակչութեան թիւին համաձայն, այնքան շատ են զանազան ասպարեզներու մէջ փայլող մեր տաղանդաւոր տղաքն ու աղջիկները, որ աշխարհի մէջ ոչ մէկ ժողովուրդ կրնայ հաւասարիլ մեզի այս առումով:

Զայուն սերը արուեստին հանդէպ, իր երակներուն մէջ հոսող արեան խառնուած է ի ծնէ. անկարելի է գայն անջատել ու դուրս բերել արիւնէն: Երաժշտութիւնը, երգն ու պարը, նկարչութիւնն ու ճատրակը վերջէն ներկրուած ազդակներ չեն, անոնք եղած են հայու ծիններուն մէջ ի վերուստ եւ կը մնան ու դուրս գալով կը մշակուին, կը բիւրեղանան:

Սփիւռքահայութեան մէջ ալ կան շնորհալիներ ու բնածին ձիրքերով օժտուածներ, սակայն, անոնք Զայաստանի պէս հող չունին իրենց ոտքերուն տակ, անոնք Զայաստանի փոքրիկներուն նման պետական եւ ժողովրդական հոգատարութիւն չեն վայելել:

Ականջս տակաւին ձայնասփիւռին է ու մեծ բաւականութեամբ կը լսեմ անոնցմէ իւրաքանչիւրին Զայաստանի ու արտերկրի մէջ տարած յաղթանակներուն ու շահած մրցանակներուն մասին լուրերը: Աչքերս դարձեալ կը թրջին, սակայն այս անգամ ուրախութեան արցունքներով:

Ծրագիրը կ'աւարտի ու պատրաստ եմ *ռատիրոյի* կոճակը դարձնելով անջատելի ձայնն ու ելլել անկողինէս, երբ կը լսեմ յաջորդ հաղորդումին ծանուցումը՝ «Ինչպէս պարում ենք, այնպէս էլ ապրում ենք»...

Այս անգամ մասնագիտական մեկնաբանութիւն մեր ժողովրդական պարերուն մասին. անոնց ծագումը, խորհուրդը, կատարողական հմտութիւնները... ու կը հնչեն տի ու զուռնան:

Կը վերյիշեմ Գեորգ Էմիլի գոհարը՝ «Սասունցիների Պարը» երկարաշունչ բանաստեղծութիւնը ու վերանորոգ տրամադրութեամբ կ'ելլեմ ոտքի:

Այս է Զայաստանը:

Յակոբ Միքայէլեան



## «ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԱՂԷՏՆԵՐՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՅՆԸ»




Բժիշկ Տիգրան Փիլաճենտ

«Քրիստոնեաներու Աղետներուն Ծայրագոյնը» աշխատասիրութիւնը գրի առնուած է ականատեսի մը կողմէ:

Պատմական բացառիկ փաստաթուղթ մըն է ան՝ 1895 թուականին եւ 1914-1919 թուականներուն թուրքիոյ եւ Միջագետքի ու յատկապէս Մարտին քաղաքի քրիստոնեաներու կրած անարդարութիւններուն բռնութիւններուն, ամենագումներուն, արքայապետներուն, անոնց ինչքերու յափշտակութեան ու վաճառքին, ջարդի, սպանդի եւ այլ քստմնելի ու ստորնացուցիչ արարքներու մասին:

Հայր Իսահակ Արմաշի «Քրիստոնեաներու Աղետներուն Ծայրագոյնը» գործին մէջ:



գոյնը» գիրքին առաջին տպագրութիւնը տեղի ունեցած է 1919 թուականին:

Նախքան նախաբանը, աշխատասիրութիւնը կը սկսի այսպիսի խօսքերով:

- Ո՞վ է Հայր Իսահակ Արմաշէն. Խուրճիկաճոյն Արմաշէն ասորի (սուրիանի) կաթողիկէ վարդապետ է. ծնած Միջագետքի Մարտին քաղաքը: 16 տարեկանին յաճախած է Լիբանանի Շըրֆէ վանքը եւ 1903-ին աւարտելով գայն՝ կուսակրօն քահանայ կարգուած: Որպէս սուրիանի վարդապետ եւ լեզուագետ, խորութեամբ ուսումնասիրած է սուրիաներէնը եւ հմտացած անոր մէջ:

Որպէս կղերական, նշանակուած է իր հայրենի Մարտինի եւ շրջակայ շրջաններու հոգեւոր հովի: Առաջին աշխարհամարտին Օսմանեան Կայսրութեան կողմէ ձերբակալուած ու բանտարկուած է, սակայն շուտով ազատ արձակուած է: Հայր Իսահակ Արմաշէ այն եզակի անձնաւորութիւններէն է. որ Մարտինի մէջ մնալով ականատես եղած է Սեյֆոյի ջարդերուն, որոնց զոհ գացին մօտ կէս միլիոն սուրիանի եւ քրտանի քաղաքացիներ: Ան որպէս կենդանի վկան Օսմանեան Կայսրութեան քրիստոնեայ ազգերուն հանդէպ ի գործ դրած վայրագութիւններուն, գրի առած է տեսածներուն կարեւորագոյնները եւ գաւտնը անմահացուցած է իր «Քրիստոնեաներու Աղետներուն Ծայրագոյնը» անուանեցիկը, որ քրիստոնեաները շուարած չմտնան այդ դէպքերուն ի լուր:

տոնեաներու Աղետներուն Ծայրագոյնը» գործին մէջ:

Պատմաբան-լեզուագետ հոգեւորականը, որ 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարակիզ քին Մարտինի մէջ կը ծառայէ որպէս կղերական, իր գրքին մէջ նախ պատմական ակնարկով կը փորձէ ներկայացնել շրջանի ժողովուրդներուն պատմութիւնը, հիմք ընդունելով այդ ժամանակաշրջանի գիտութեան յայտնի պատմական տուեալները, որոնք լուրջ վերատեսութեան կարիք ունին: Սակայն մեզի համար կարեւոր են իր ժամանակաշրջանին մասին տուած վկայութիւնները, որոնք հայկական ջարդերու մասին ոչ հայ ականատեսի հնագոյն (ջարդը ընթացքի մէջ եղած ատեն) վկայութիւններն են եւ արժանի են ուշադրութեան, ուսումնասիրութեան:

Այս աշխատասիրութիւնը յայտնի է գիտական նեղ շրջանակներու միայն: Աշխատասիրութիւնը ուսումնասիրած է իր «Օսմանեան Կայսրութեան Մէջ Հայոց Ցեղասպանութեան Ականատեսները» արաբերէն աշխատութեան մէջ ներկայացուցած է Սուրիոյ մէջ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ., փրոֆ. Արշակ Փոլատեան, որուն համար երախտապարտ ենք իրեն:


Գիրքին գեղարուեստական ու ազդեցիկ ոճով գրուած նախաբանը լի է պատկերաւոր խօսքերով. ուստի ժամանակ ու ճիգ խնայելու միտումով, գիրքը թարգմանելով, ամփոփ ձեւով կը ներկայացնենք «Գանձասար»ի այս համարէն սկզբեալ՝ յոյս ունենալով ներկայացումը շարունակել յաջորդ համարներուն մէջ:

### ՆԱԽԱԲԱՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Գիրքը կը պարունակէ աղետաբեր ու ցաւալի պատերազմական դէպքերու պատմութիւններ, սարսափելի ու յուզիչ պատուհասներու լուրեր, ինչպէս նաեւ կը նկարագրէ քստմնելի ջարդերու ընթացքը եւ զագրելի ու անընդունելի գարշաւքները, որոնք պատահեցան Միջագետքի գրեթէ բոլոր երկիրներուն մէջ: Այն կը սկսի անցեալի պատմութեան մասին համառօտ տեղեկատուութեամբ՝ նպատակ ունենալով յիշեցում մը կատարել նախքան դէպքերու ընթացքին ներկայացումը:

«Գիրքը «Քրիստոնեաներու Աղետներուն Ծայրագոյնը» անուանեցիկը, որ քրիստոնեաները շուարած չմտնան այդ դէպքերուն ի լուր: Միրելի ընթերցող,

Չիւնուէ՛ համբերութեամբ, քանզի ես քու եղբայրդ եմ երբ սիրտդ արիւնի, դաշնակիցդ եմ երբ աղետներու մէջ ես, կարեկիցդ եմ երբ վրձտի ու տառապանքի մէջ ես, որովհետեւ սիրտս պատուած է դաւով ու նենգութեամբ. այն աստիճան, որ եթէ հարց տաս թէ «ի՞նչ ունիս», քեզ կը դիմաւորեն դառնագին արցունքներս ու ցաւագին ճիչերս, վասնզի  
Շար.՝ Էջ 14 ➤



Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան շարքերէն ներս մուտք գործող գայլիկն ու արծուիկը ՀՍԸՄ-ականի խոստումը եւ հայ սկաուտին դաւանանքը իրացնելով ՀՍԸՄ-ի շարքերէն ներս պարտականութեան գիտակցութեամբ կը սորվին ծառայասեր ըլլալ եւ

կը պրոպար. - «Նշան, (եղբ. Նշան Թիւսիւզեանին էր խօսքը) չուանին ծայրը քիչ մը ներս առ...»:

Ինչպէր է՞րն ասոնք թէ...  
Չէ՛, ինչպէր չէին անոնք՝ բայց ինչպէս թիւն մը կար, գաղափարի ինչպէս թիւն մը կար, որ սիրով կը կատարէր զիրենք այդ աշխատանքին:



կը կերտուին մարդկային եւ ազգային արժեքներով:

«Արեւելք Մարզաշխարհ» մարզական թերթին մէջ Սամուէլ Մկրտիչեան «Դաս Առնենք» խորագիրով ՀՍԸՄ-ական պատասխանատուներուն ունեցած այդ կենսունակ ոգին կը ներկայացնէ, նկարագրելով միջ-մասնաճիւղային խաղերու նախօրեակին տարուած կամաւոր աշխատանքը եւ հետեւեալ տողերով նոր սերունդները կը հրաւիրէ օրինակ առնել ՀՍԸՄ-էն.

«Կիրակի էր, 5 Հոկտեմբեր:

Գիտէի որ այդ օր ՀՍԸՄ-ը իր տարեկան Բ. Ողիմպիականը պիտի ունենար: Ներքին բնագրէ մը մղուած հիւանդ գլուխս առի ու «Նաւասարդեան» դաշտ ուղիւնեցայ «Երթամ, Նայիմ տղաքը ի՞նչ կ'ընեն» ըսելով:

Գացի: Հինգ-վեց հոգի վազքուղիին գիծերը քաշելով զբաղած էին: Մօտեցայ: Մէկը, քիչ մը ծայրէն բռնած, ուղղութիւն կու տար քաշուելիք գիծին: Նայեցայ, կարծէք քիչ մը ինտրոյս առանց պատճառը գիտնալու ու ամօթով մնացի:

- Տոքթոր, այս ի՞նչ է:  
- Այս պարտականութիւնս է: Այս ալ իր անուշութիւնը ունի...:

Այո, բարեկամ, այդ ալ իր անուշութիւնը ունի... անուշութիւն մը, որուն համէն դժբախտաբար շատ քիչ մարդիկ կ'ախորժին: Վայրկեանապէս, ուրիշ դէպք մը եկաւ անցաւ բաց աչքերուս առջեւէն: Դէպք մը, որ մեծապէս ազդած է վրաս:

Տարիներ առաջ էր: ՀՍԸՄ-ի միջ-մասնաճիւղային Չատկուան խաղերուն առիթով դարձեալ «Նաւասարդեան» դաշտին վրայ գիծեր կը քաշուէր: Ու այս անգամ ուրիշ ՀՍԸՄ-ական մը՝ եղբայր Գառնիկ Ազիբեան, իր ամբողջ հասակով գետին պառկած այդ փոշիներուն մէջ,

Ու այդ աշխատանքը իրենց համար անուշութիւն մը ըլլալէ անդին, հոգեկան բարարարութիւն մըն էր:

Ու այդ աշխատանքը, այդ գեղեցիկ ժեստը, եթէ կ'ուզէք, բարոյական լաւ դաս մըն է ուրիշներուն համար:

Աստու «պարզ բաներ» են թերեւս քստմնաբեր ուրիշներուն կողմէն: Բայց պէտք է գիտնալ, որ այս պարզ բաները իրենց խոշոր դրական կողմերը ունին ներկայ ժամանակներուն մէջ, սերունդը կրթելու տեսանկյունէն...:



Առաջնորդն է, որ կ'առաջնորդէ: Առաջնորդն է, որ դաս կ'ըլլայ՝ նիւթական եւ բարոյական:

Ես կրնամ հիանալ ու կը հիանամ, ուրիշ մը կրնայ քստմնաբեր մը ունենալ ու անցնիլ՝ վերի տեսարաններուն առջեւէն: Այդ մէկը ըմբռնումի, դաստիարակութեան հարց է:

Ո՞ր ենք մենք, երբ մեր մեծերը այդպէս թեւեռնին սոթտած հողին ու փոշիին հետ կը խաղան, հազար ու մէկ յոգնութիւն յանձն կ'առնեն մեզի համար:

Մենք անտարբեր ենք... Մենք կը սպասենք, որ մեր մեծերը ընեն այն բոլորը, որ մեր պարտականութիւնն է: Մենք կը սպասենք, որ գ ան մեզ տունէն տանին, որպէսզի միջում մը խաղանք:

Հէ՛յ ժամանակներ, ո՞ր գացիք, ե՛տ դարձէք, ե՛տ դարձէք եւ լոյսին տուէք բոլոր գեղեցիկ գոհողութիւնները, նուիրումները, որոնք կրնան  
Շար.՝ Էջ 14 ➤



## Ե՞Ս ԷԻ, ԹԵ ԻՆՔՆ ԷՐ ՔԱՐԵՆ ԵՓՓԷԻ ԻՍԿԱԿԱՆ ԹՈՌՆԻԿԸ

Ա.



**Տիրուկ Մարգարեան - Կարապետեան**

Բուսակերութիւնը եղած էր օտարական աղջկան՝ դանիացի Ռոզային մեզի կատարած առաջին այցելութեան հիմնական դրոյապատճառը: Տղան ու Ռոզան, որպէս կիթառահար ու ֆիլիթառահար զիրար հանդիպած էին երաժշտանոցի մը երե-



կոյթին, ուր միասնաբար ելոյթ ունենալէ ետք, բարեկամներ դարձած:

Արաբական մշակոյթով հետաքրքրուող Ռոզան, նախքան իր համալսարանական ծանր տարիներուն սկսիլը, քակի մը ամիսով եկած էր Լիբանան, ուր, որպէս կամաւոր, արաբ գաղթականներուն անգլերէն պիտի դասաւանդէր, փոխարէնը ինքն ալ մօտէն պիտի ծանօթանար արաբերէն լեզուին ու մշակոյթին:

Որո՞նք միտքէն կ'անցնէր, որ հայուն մասին գաղափար իսկ չուներ 18-ամեայ աղջնակին կեանքին մէջ պիտի յայտնուէին հայեր, այսինքն՝ մենք, տակն ու վրայ պիտի ընէին զգացումները եւ նոր հորիզոններ պիտի բանային անոր անմեղ ու ժպտուն աչքերուն դէմ:

Մեր տան դռները յաճախ լայնօրէն բացած ենք մեր գաւազներուն ծանօթներուն եւ ընկերներուն դիմաց: Վստահած ենք մեր գաւազներուն, անոնք ալ այդ վստահութիւնը արդարացուցած են:

Բարեբաստիկ օր մըն ալ բուսակեր աղջնակին ճաշացուցակը ու քիմքին համը հարստացնելու համար անոր դիմաց ո՛չ միայն մեր դռները, այլեւ հայկական ճաշասեղանն ու մեր ջերմ սիրտերը բացինք:

Մեր հիւրը տասնութ տարեկան, բարձրահասակ, ճերմակամորթ, շիկահեր, նշածեւ աչքերով, երկարավիզ ու նիհարակազմ աղջնակ մըն էր: Անոր համար արտաքին երեւոյթը, արդուզարդը, հագուստ-կապուստը եւ նոյնիսկ նորոյթ քցիջային հեռախօս ունենալը անհեթեթութիւններ էին: Մեծ մօրը պահարանին ամենէն նուրբ ձեռնային հիւսուածքով հագուստը խնամքով պահած ու իր մատղաշ մարմինին վրայ զգուշութեամբ կրած էր ան: Անոր պաշտօնական միակ գարդը մեծ օղերն էին, որոնք շատ հմայիչ տեսք մը կու տային իր բնականէն անէլի երկար վիզին: Ուսեալ եւ լուսամիտ ծնողքին դաստիարակութիւնը կ'արտացոլար իր նիստուկացին, կիրթ շարժումներուն ու խօսակցութեան ընդմէջէն: Սրտին բարիութիւնը լեզուին կը հասնէր, անգլերէնի

կը թարգմանուէր ու որպէս սիրոյ բացիկ ազնուօրէն կը հրամցուէր մեզի:

Ռոզան առաջին անգամ ըլլալով հայկական ճաշատեսակներուն, անոնց անուններուն ու համերուն կը ծանօթանար եւ առաջին իսկ պատահէն կը հիանար: Հայկական ճաշատեսակներուն առատ համեմունքի քաշողական ուժն էր, թէ մեր սրտբաց ընդունելութիւնը, չեմ գիտեր, սակայն, այդ օրուրէն Ռոզան մեր ընտանիքին մտերիմ բարեկամը դարձաւ: Սմբուկով, դրոմով, շոմինով եւ այլ կանաչեղէններով ու ընդդէմներով պատրաստած ճաշերս եւ աղցաններս սորվելու համար յաճախ կ'այցելէր մեզի: Նախասիրած ճաշատեսակը *իչն* էր: Իրիկուն մը *իչ* ուտելու համար հիւրընկալեցինք նաեւ Ռոզային դաս-



իացի ընկերուհիները: Անոնց համար ալ հետաքրքրական ու համեղ էր այս ճաշատեսակը: Ամուսինս ու տղաս կատակելով կը կրկնէին. «Ասոնք պիտի կարենա՞ն այսպիսի *իչ* պատրաստել»: Ու տղաս կը գանգատէր. «Մաման հիւրերս գրաւեց: Կարծես իր հիւրերն են, ոչ թէ իմ: Նայէ՛, ի՞նչ այնորժակով ալ կը բացատրէ: Է հա՛, որովհետեւ հայկական ճաշ է... հայկական»:

Մերոնք, սակայն, քաջ գիտէին որ հայկականն ու հայը օտարին ներկայացնելու համար ոչ միայն ճաշերու պատրաստութեան, այլ ամեն միջոցի կը դիմէի: Գաղտնաբերութեան բաղադրութիւնը ներկայացնելէ անդին, իմ կես-կատար անգլերէնով կը սկսէի խօսիլ Հայաստանի մասին, Հայոց Պատմութեան «դասեր» տալ, Հայաստանի բերքին՝ նուռին, խաղողին, ծիրանին, թութիւնի համու ու իւրայատկութիւնը բացատրել. «Գիտէ՞ք, որ մեր տան կից, Հայաստանի թթենիները յիշեցընող, խոշոր թթենի մը կայ, որուն ճիւղերուն վրայ հասունցած թութերը գետին կ'իջնան ու կը ճգմուին, եթէ գանոնք քաղող եւ ուտող չըլլայ», ըսի ու հրաւիրեցի միասնաբար քաղելու եւ համտեսելու այդ մանր, բայց հիւթեղ թութերը:

Յանկարծ մտքիս թռիչքով գացի հոն՝ Հայաստան, եւ յիշեցի, թէ ինչպէ՛ս գրականագետ ընկերուհիս հետ հիւրընկալուեցանք Մուղնիի Մետրոպ Արք. Աշտենակի անունը կրող

դպրոց, ապա՝ Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ մեր ուխտը կատարելէ ու օրհնութիւն ստանալէ ետք, տնօրէնուհիին ուղեկցութեամբ ուղղուեցանք գիւղացիներէն մէկուն փոքր դրախտիկը. այո՛, դրախտիկը, ի՛մ դրախտավայր հայրենիքին պուճուր դրախտիկն էր ան, ոչ թէ սովորական այգի մը: Դրախտիկ, ուր վիթխարի կեռասենիներ, թթենիներ, ընկուզենիներ ու խնձորենիներ առատ բերք հասցուցած էին, իսկ հրաշք բնութիւնն ու անոր գեղեցկութեան դրոշմը կրող մարդիկ, Վանաձորի հիւրասիրութեամբ, Անահիտին սիրով եւ Աստղիկին գեղեցկութեամբ կը պարուրէին մեզ: Հոն էր, ուր առաջին անգամ սաւան բռնելով անոնց հետ կանգնեցայ վիթխարի թթենիին տակ, ու բոլորս, հերթաբար, երկար ու հաստ ճագոտով զարկինք թթենիի գլխահակ ու բերրի ճիւղերուն: Այդ պահուն էր որ ըմբռնեցի՝ «Թութի պէս գետին ինկան» արտայայտութեան իմաստը: Թութերը մէկ զարկով կ'իջնային ճերմակ սաւանին վրայ, ապա գլորուելով կը հաւաքուէին սաւանին կեղտոնը ու պար բռնած կը գրգռէին բոլորին այնորժակը:

Տարիներ առաջ Մուղնիի մէջ սորվածս, այս գիշեր, հոս գործարեցի: Սաւանը բռնած պահուս ես Մուղնի էի, ու տան մէջ ճաշերու պատրաստութենէն յոգնած անձը չէի այլեւս... արտասովոր խանդավառութիւն մը պատած էր հոգիս: Երեւակայութեամբ Մուղնի հասած էի կրկին, ու դրախտային լուսաւոր շողեր կը ցոլային կարօտի դառնութիւնը ապրող աչքերէս: Դանիացի հիւրերուս յիշողութեան մէջ ալ այդ պահը կենդանի մնաց. իրենց պատմածին համաձայն, Դանիոյ ամենէն թանկ ու հագուստաւ պատուէրէն



էր թութը: Այդ օր համոզուեցայ որ անմոռանալի ու թանկագին պահերը, Աստուծոյ նախախնամութեամբ, մարդիկ իրենք կը ստեղծեն:

Յաջորդ օրերուն Ռոզային հետ այնքան մտերմացանք, որ երբեմն, կէս լուրջ, կէս կատակ, զինք Վարդի կը կանչէիք. իսկ ինք գոհունակութեամբ «Այո՛, հրամեցէ՛ք», կը պատասխանէր: Երբեմն ալ մտքով հեռուներ կը սաւառներ ու իր «հայկական անունը» կը մոռնար: Մենք ալ քանի մը անգամ «Վարդի՛, Ռոզա՛», կը բացագանչէիք: Ռոզան ամենալավ ու հեզութեամբ. «Օ՛հ, այ ֆօրկար/Օ՛հ, մոռցայ/», կ'ըսէր ու տասը անգամ ներողութիւն կը խնդրէր:

Օրերը իրենց շէշող կոպերը թարթելով սահեցան ու հայկական դրոշմով մը պարուրեցին Ռոզային բարի սիրտն ու հոգին: Անոր մէջ հայերէն սորվելու անյազ փափաք մը արթնացաւ: Յաճախ գլուխ-գլխի կը նստէիք ու կը գրուցէիք հայութեան, Հայաստանին եւ նոյնիսկ Հայկական Հարցին մասին: Գրած ոտանաւորներս առաջին ունկնդրողը ինքն էի՝ ըլլալով ու անգլերէն թարգմանութիւնը լսելէ ետք իր կարծիքը անպայման կու տար, իսկ եթէ պատահէր, որ ոտանաւորներուն մէջ հայրենիքի կարօտը, հայրենաբաղձութիւնը, բռնագրաւուած մեր իրաւունքը, հողերը, Արարատն ու Արաքսը տեղ գրաւած ըլլային, բացատրութիւն մը կ'ուզէր ու այդ վայրկեանին կը սկսէին հայերէնի «դասապահերը»:

Կոմիտասի երաժշտութեան ծանօթանալէն ետք, տղաս ու Ռոզան յաճախ անոր կտորները կը նուագէին՝ մեր հոգիները պարուրելով հայկական երաժշտութեան հմայքով:

Օրերու ընթացքին, Ռոզային հետ իմ ծանօթութիւնը մտերմութեան վերածուեցաւ: Միգամած օր մը, երբ անհանգիստ պառկած էի, զանգին անդադար զնգոցն տեղէս ցատկեցի ու աճապարանքով բացի դուռը: Ռոզան էր կրկին, որ նուսենիի թաղար մը ձեռքին, հայկական խորհրդանշական նուէրով մը մեր մտերմութիւնը կ'արժեւորէր: Հաճելի անակնկալը արցունքներ ժայթքեցուց ուրախ աչքերէս: Ցաւերս, պահ մը, շիկնած մարդու նման մութ անկիւն մը պահուրդեցան, մինչ ուղեղս երջանկութեան եւ երախտագիտութեան զգացումներով համակուած պահ մը անարձագանգ մնաց:

- Անցած ըլլայ:
- Ի՞նչ ...
- Մայրս ըսաւ, որ ձեռնունայն չգամ: Երախտագիտութիւնս կը յայտնեմ:
- Վայ...
- Գիտեմ որ պիտի սիրես: Զու սիրածդ է:
- Նուսենի՞: Նուսենի՞... իսկական նուսենի՞...
- Հայկական խորհրդանշալ մըն է:
- Ուրկէ՞... Ինչպէ՞ս...

Դանիացի օտարական մը, կարմիր, գանգակածեւ ծաղիկներով զարդարուն, կանաչ նուսենի մը պիտի նուիրէր ինձի ու այդ նուսենիով ամանորեան լոյսեր վառէր զգացական աշխարհիս մէջ: Ռ՞վ կրնար գուշակել այս առեղծուածին պատասխանը: Ռ՞վ կրնար լուծել այս հանելուկը: Ռ՞վ կրնար գիտնալ, թէ ապագայ կոչուած գաղտնի տուփը ինչպիսի՞ անակնկալներ վերապահած է մեզի: Ռ՞վ...:

Ու կեանքիս մէջ ստացած առաջին պտղատու ծառս՝ նուսենիս, օտարութեան մէջ, դարձաւ սրտակից ընկերուհիս, աղջիկս, հոգեհարազատ ազգակիցս, որուն հետ կը գրուցէի, անոր ծաղիկները կը շոյէի, ինամքով կը ջրէի գայն ու ծաղիկներուն պտուղի վերածուիլը անհամբեր կը սպասէի, եւ վերջապէս, ամեն օր, այդ ծառը հոս՝ ջուս բերողը կ'օրհնէի:

*(շարունակելի)*



## Աշակերտական Անկիւն

### ՊԱՐԸ



**Լուսինէ Իգապէլ Նանեճեան**

Գիրքերու մէջ յաճախ կը կարդայի, որ մարդ իր զգացումները արտայայտելու համար շատ մը ձեւերով դիմած է: Երբ տասնմէկ տարեկանիս սկսայ հետեւիլ Կրթասիրաց Մշակութային Միութեան «Շող» պարաֆունքի փորձերուն, պարին պարզեւած հաճոյքը ապրեցայ: Խումբիս հետ ճկուն, երբեմն ալ խորոխտ շարժումներով պիտի կարենայի ներկայացնել ապրում մը, պատկեր մը, պատմութիւն մը: Երբ պարի փորձի ժամը կը հասներ, հրճուանքով եւ խանդավառութեամբ սրահ կ'երթայի: Փորձի ժամերը շատ ուրախ կ'անցընէի: Տուն կը վերադառնայի բարձր տրամադրութեամբ, աշխոյժ եւ կայտառ: Պարը այն արուեստն է, որով ձեւ կ'առնէ մեր հոգին, կը թռչի ու կը միանայ ուրիշ հոգիներու՝ անոնց հետ հաղորդակցելու, մտերիմներ գտնելու:

Պարը կը յղկէ նաեւ մարմինը, կը նրբացնէ աղջկայ մը քալուածքը, նազանք կու տայ անոր եւ մարմնի ճկունութիւն:

Կը սիրեմ այլազան մշակոյթներ ներկայացնող պարեր, սակայն ինծի ամենէն հարագատը հայկական պարը կը թուի: Հայկական պար պարելով մեր մշակոյթը, մեր կենցաղը, մեր արի ոգին կը ներկայացնենք:

**Ը. կարգ**

**Հայ Աւետարանական Բեթէլ Երկրորդական Վարժարան, Հայէպ**

### ԳԻՐՔԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԱՍԵՐ



**Սոփի Փալոսեան**

Մանկութենէ մեր տան մօտ կ'ապրէր ինչ որ անոր քուրսը: Ան կ'ապրէր իր երբոր ընտանիքին հետ: Զորս տարեկան էի, երբ առանց մօրս լուր տալու փախայ ինչ որ քուրսը քով: Երբ ելեր ես զիս փնտռելու, գիտցեր ես, որ անոր քովը կրնամ ըլլալ: Առաջին անգամն էր, որ տունէն դուրս կ'ելլէի միակուս: Մեծնալէս ետք, ամէն անգամ որ իր քով կ'երթայի, եւ տունին աստիճաններուն քով կը հասնէի, բարձրաձայն կը կանչէի. «Հօրքո՛ւր, ես եկայ»: Ան միշտ ժպտուն դէմքով կը դիմաւորէր զիս: Ասիկա դարձաւ սովորութիւն, եւ շարունակուեցաւ մինչեւ իր վերջին օրը:

Ան շատ լայն սիրտ ունէր, բոլորը կը սիրէր. իրենց տան դուռը միշտ բաց էր ամենուն առջեւ: Բոլոր քեզայինները գիտէին իր գօրաւոր սիրտն ու անսկուն կամքը: Մեծնալէս ետք ինծի յաճախ կ'ըսէր. «Բա՛ջ եղի՛ր, որպէսզի կեանքի ամէն դժուարութիւնները յաղթահարես»: Սիրուած էր բոլորին կողմէ: Շատ կը սիրէր փոքրերը: Ան երեսուն տարիէ աւելի ուսուցչութիւն ըրած էր: Պզտիկ եղած ատենէս, միշտ ինծի եւ եղբորս կը խաղցներ ու մեզի պատմութիւններ կը պատմէր: Մայրս ամէն առտու սուրճը իր հետ կը խմէր, արձակուրդի օրերուն մօրս հետ կ'երթայի, որ նստիմ սիրելի հօրքուրիս հետ, իսկ երբ չէի երթար՝ կը հարցնէր իմ մասին: Երբ իր եղբայրն ու անոր կինը մահացան, ապրեցաւ իր երբորորդիին հետ, նոյն տան մէջ: Ան կ'առնէր եւ կը կատարէր բոլորի՛ն դերը՝ հօրաքրոջ, մօրաքրոջ, մեծ մօր...:

Մինչեւ իր կեանքին վերջին օրը, քաջաբար դիմագրաւեց անբուժելի հիւանդութիւնը: Միշտ մեզի կ'ըսէր. «Ես պիտի լաւանամ եւ ոտքի պիտի ելլեմ»: Իր հիւանդութեան օրերուն, կ'ուզէր որ պատուհանը բաց մնայ, եւ երբ փորձ կ'ընէր քալելու՝ կ'ուզէր պատշգամ ելլել: Երկար ժամանակ դիմանալէ ետք՝ մոմի պէս սկսաւ կամաց-կամաց մարիլ: Հոգին Աստուծոյ աւանդեց 28 Մարտ 2018-ի գիշերուան 12:00-ին: Այդքան չարչարուելէ ետք՝ դիւրին մահացաւ. նոյնիսկ շուրջինները չգագցին, թէ ինչպէ՛ս եւ ե՛րբ վերջին շունչը փչեց, եւ սիրտը վերջնականապէս դադարեցաւ տրոփելէ:

Առաջին անգամն էր, որ ես գիտակից տարիքիս մէջ հարագատ կը կորսնցնէի. շատ դժուար է այս մէկը: Գրականութեան եւ կրօնի դասապահներուն սերտած ենք մահը: Սորված ենք Պետրոս Դուրեանի «Տրտունջ»ը, տարիներ եղաւ գրեթէ ամէն օր կը լսենք ելոյթներ, եւ կը կը տեսնենք նկարներ, որոնք մահուան հետ կապ ունին: Բայց այդ բոլորը չեն նմանիր հօրքուրիս կորուստին: Հօրքուրիս կորուստը տարբեր բան մըն է: Վերջերս անգիր սորվեցանք Յովի. Թումանեանի «Թմկաբերդի Առում»ի նախերգանքէն տունէր, ուր տեղ մը կ'ըսուի.

*«Մահը մերն է, մենք՝ մահինը,  
Մարդու գործն է միշտ անմահ»:*

Այս տունները իբրեւ դաս սորված էի, բացատրութիւնը հասկցած, անոնց իմաստը ըմբռնեցի, երբ շատ չանցած հօրքուրս կորսնցուցի:

**ԺԱ. կարգ**

**Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ընտանիք, Բենասպ**

**Շար.՝ Էջ 14**

### Ի՛նչ Կ'ըսենք... Ի՛նչ Կ'ըսենք



**Սոփա Տսմալտօզեան**

Հայը իր դարաւոր թափառումներուն մէջ գանազան երկիրներ հասած է: Երկիրներ, որոնցմէ ոմանց անուան միայն քարտէզի վրայ կը հանդիպէինք: Անգամ ինչպէ՛ս է սակայն ամենէն դժուար հասանելի տեղերն անգամ ու մեծ սիրով իրացուցած տեղուն ժողովուրդին լեզուն, մշակոյթը. աշխատած է զարգանալ ու զարգացնել միջավայրը եւ վերջապէս իր հայու աստուածատուր շնորհքին մարգարիտները թափել օտարներու դէմ...:

Այս քառսին մէջ, սակայն, երբեմն տուժած է իր լեզուն...:

Ընդհանրապէս ոեւէ մարդ իր մայրենիէն ետք սորված լեզուն կը հնչէ իր իսկ լեզուն եղանակով, իսկ հայը...:

Եթէ նկատի առնենք միջազգային լեզու համարուող դարձած անգլերէնը, պիտի տեսնենք, որ այդ լեզուն օգտագործող այլազգիներ, գայն կը հնչեն իրենց լեզուի եղանակին յարմարեցնելով, իսկ հայը: Ան, երբ լեզու մը սորվի, պարտք կը զգայ խօսիլ ճիշդ անոր տիրոջ նման:

Անշուշտ լեզու սորվիլը առաւելութիւն մըն է, որ դրական է ու հարստացնող, լեզուագետ դառնալը՝ այլ առաւելութիւն, այդ արդէն մասնագիտական ոլորտ է: Մեր խօսքը այն հայուն մասին է, որ սորվելով օտար լեզուն, կը գոհէ իր հազարամեայ մայրենիին հնչիւնը, օտարիւր՝ որդեգրելու մոլութեամբ:


Այո, հազարամեակներու կեանք ունեցող հայերէնը մենք կը վտանգենք:

Արեւմտահայերէնի կորուստին ահը կրկնելով ու անոր պահպանման համար քայլ մը չառնելով, մենք մեր գաւազներուն կը փոխանցենք հայերէնի նկատմամբ անտարբերութեան հիւանդագին վիճակը, երբեմն պատրուակ համարելով այլ լեզուի մը տիրապետելու կարելուութիւնը:

Մեր նախանձախնդրութիւնը հայերէնի եւ յատկապէս արեւմտահայերէնի նկատմամբ վայրէջք կ'ապրի: Այդ վայրէջքը երբեմն մենք իսկ կ'ընտրենք ու պատճառ կը դառնանք անոր արագացման:

Հասկնալի է անշուշտ, որ 21-րդ դարուն «շնորհած» համաշխարհայնացման եւ ճարտարարուեստի սրընթաց զարգացման արդիւնքով երբեմն կը տուժէ ազգայինը: Բայց յիշեալ երեւոյթներու ազդեցութեան կորօրէն ենթակայ դառնալն է, որ ազգայինի կորուստին կ'առաջնորդէ: Ինչո՞ւ մենք՝ հայերս, սակայն, աւելի անտարբեր ենք մեր ազգային արժէքներուն պահպանման գծով: Հաւանաբար յստակ պատասխան չունենանք այս հարցուն, որովհետեւ այսպիսի հարցու-

մի մը պատասխան տալու համար գանազան կողմերու պէտք է ականջ տամ, ուսումնասիրեմ իրավիճակներ եւ այլն: Այդուհանդերձ կը ցաւիմ, երբ կը տեսնեմ, թէ օտար ու յատկապէս երոպական զարգացած միջավայրերու մէջ ինչպիսի ուրախութեամբ կը հաշուեն տարուան ընթացքին իրենց կարողացած գիրքերը, կը ջանան տարուէ տարի աւելցնել այդ թիւը ու աւելի զարգանալ: Այդ միջոցին առաւել եւս կ'ամրապնդեն սերը իրենց լեզուն հանդէպ, թարգմանուած գիրքեր կարդալով կը ծանօթանան այլ մշակոյթներու... արդե՞ք անոնք չեն տարուած համացանցով ու անոր «բարիքներով»՝ մէկդի նետելով տպագիր գիրքերը:



Տակաւին քառորդ դար առաջ էր, երբ Հայէպի մէջ ընթերցասերներու հոծ բանակ մը կար՝ տեղուն գրադարանները իրենց փառքի օրերը կ'ապրէին: Համացանցն է արդե՛ք, որ մեր ժամանակը կը խլէ, բայց առցանց գիրքեր ալ կան չէ՞, ուրե՞մն...:

Գիրքերը՝ գրադարաններու մէջ պահ դրուած ըլլան, թէ համացանցի մէջ ներթափանցած, պարզապէս ժամանցի աղբիւրներ չեն, անոնք զարգանալու, մեր մայրենիին պահելու ու զարգացնելու եւ մեր սրտերուն մէջ թաշտելու միջոցներ են:

Մեր մշակոյթին հանդէպ անտարբեր մնալով, միայն վատ օրինակ կը դառնանք դեռատի սերունդին: Ժամեր ամբողջ համացանցային գրոյցներով, կամ դիմատետրի էջերով տարուած ծնողքը օրինակ կը դառնայ իր գաւազին ու գինք ալ կը հեռացնէ գիրք կարդալու սովորութիւնը:

Յաճախ մեր գաւազներէն գերագանց կիշեր կ'ակընկալենք, գանոնք կ'ուղարկենք կեդրոնէ կեդրոն՝ իրենց ունեցած եւ չունեցած ձիրքերը «զարգացնելու», հաւանաբար երբեմն ալ պարզապէս անոնց տաղտուկէն ձերբազատուելու համար:

Բայց կը մտածենք, թէ քանի ժամ կը յատկացնենք անոնց դաստիարակելու, հայկական մեր արժէքներուն աղերսելու, միասին գիրք մը ընթերցելու, թէկու՞զ գրուցելու գիրքն յուզող հարցերու շուրջ: Մեզ հետաքրքրողը հայերէն լեզուի կի՞շն  
**Շար.՝ Էջ 14**



**ՇՆՈՐՀԱՌՐԱԳԻՐՆԵՐ ՈՒՂՈՒԹ ՍՕ ԽԱՀԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ՝ «ՍԱՅՐԵՐՈՒ ՕՐ» ՈՒՄ  
ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԻՑՎ**



Կրթասիրաց Ս. Չենպերճեան Երկրորդ Վարժարանի Հոգաբարձութիւնն ու Տնօրէնութիւնը ջերմապէս կը շնորհաւորեն Շրջ. Վարչութիւնը եւ Սուրիահայ Օգնութեան Խաչի ողջ անձնակազմը «Հայաստանի Հանրապետութիւնը եւ Խաչուհին» խորագիրը կրող մայրերու օրուան տօնակատարութեան առիթով:

Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակին ամենայն հպարտութեամբ կը մեծարենք մեր հայ մայրերն ու քոյրերը, որոնք մեծ ներդրում ունեցած են հայ ժողովուրդի դարաւոր պատմութեան ընթացքին:

Անսպառ ոյժ եւ կրող Ձեր բոլորի աշխատանքներուն մէջ:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով:

**Յարգանք՝**

**Կրթասիրաց Ս. Չենպերճեան Երկրորդ Վարժարանի Տնօրէն Անդրանիկ Պողոսեան**

Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը կը շնորհաւորէ ՍՕ Խաչի Շրջանային Վարչութիւնը «Մայրերու Օր»-ուան առիթով:

Ձերմապէս կը շնորհաւորենք բոլոր մայրերը իրենց տօնին առիթով: Բարձր կը գնահատենք խաչուհիներուն եզակի դերը, ծնունդէն մինչեւ մեր օրերը հայ կեանքին ներս, դաստիարակելու ու պատրաստելու հայ երիտասարդը:

Կը մաղթենք քաջամոռոջութիւն, ոյժ ու կարող անոնց:

**Համազգայինի**

**Սուրիոյ Շրջանային Վարչութիւն**

«Գանձասար» պաշտօնաթերթի խմբագրութիւնը կը շնորհաւորէ ՍՕ Խաչը օգտաշատ եւ դաստիարակիչ պատգամներ փոխանցող այս ձեռնարկի կազմակերպման առիթով: Խմբագրութիւնն կը շնորհաւորէ նաեւ պարգեւատրուող բոլոր վաստակաւոր խաչուհիները, ի մասնաւոր թերթիս սրբազրիչ, վաստակաշատ-հայերէնաւանդ ուսուցչուհի տիկին Չեփիւռ Պապիկեան-Աւագեանը եւ այս առիթով պարգեւատրուող բոլոր խաչուհիներուն եւ ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբին կը նուիրէ «Գանձասար Բացառիկ-2018»-ի հատորէն օրինակներ:

**Խմբագրութիւն**

**«Գանձասար» պաշտօնաթերթի**

**Լաթաչիա**

**«ՄՕՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՌՋԵՒ ԱՄԷՆ ԳԼՈՒԽ ԿԸ ԽՈՆԱՐՀԻ»**

Հովանաւորութեամբ ՍՕ Խաչի Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ ՍՕ Խաչի «Շուշի» Մասնաճիւղին, Մարտ ամսուն , Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արարատ» սրահին մէջ տեղի ունեցաւ Մայրերու Օրուան նուիրած հանդիսութիւն:

Հանդիսութեան բացումը կատարուեցաւ ՍՕ Խաչի քայլերգով, ներկայութեամբ Արժ. Տ. Տաթեւ Ա. Քիւլ. Միքայելեանի, Ս. Աստուածա-

հան Նաւասարդեան» Մասնաճիւղի «Գեղարդ» պարախումբը՝ ներկայացնելով «Աւարայրի պար»ը:

Օրուան բանախօսն էր ՍՕԽ-ի Շրջ. Վարչութեան ատենապետուհի Հռիփ Կանանեան: Ան ներկայացուց հայ կնոջ դերը հայ ազատագրական պայքարին եւ հայոց պատմութեան մէջ՝ անդրադառնալով պատմական մեր փայլուն էջերուն: Բանախօսութեան ընթացքին մերթ ընդ մերթ ցուցադրուեցան ազատատենչ հայ



ծին եկեղեցւոյ Թաղական Խորհուրդին, Ազգ. Սրբոց Նահատակաց վարժարանի հոգաբարձական եւ ուսուցչական կազմերուն, ՍՕ Խաչի Շրջանային Վարչութեան ատենապետուհի Հռիփ Կանանեանի, ինչպէս նաեւ Լաթաքիոյ մէջ գործող միութիւններու ներկայացուցիչներուն:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ հանդիսավար Ալին Գաբրիէլեան, ապա մասնաճիւղի ատենապետուհի Սաթենիկ Պետրեան բացման խօսք արտասանեց՝ ողջունելով հայ մայրերը, որոնք հայ ընտանիքին ապահովութիւնը եւ կայուն կեանքը կ'երաշխաւորեն:

Այնուհետեւ Հերմիկ Գաբրիէլեան տպաւորիչ առօրեանութեամբ ամունքեց ժազ Յակոբեանի «Մեր Մայրեր»ը:

Սեւան Տերմենճեան անմահն Կոմիտասի «Գարուն Ա»-ն նուագելով (դաշնամուր) յուզումնախառն պահեր պարգեւեց ներկաներուն:

Յայտագիրին իր մասնակցութիւնը բերաւ Համազգայինի «Վա-

կիներուն դիմանկարները:

Կանանեան դիտել տուաւ, որ 2018 տարեշրջանը՝ Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակը, հայ ժողովուրդին համար հպարտութեան տարի է:

Այնուհետեւ տեղի ունեցաւ երգման արարողութիւն, Շրջանային Վարչութեան անդամ՝ Սեդա Տէր Աբրահամեանի կնքամայրութեամբ: Բեմ բարձրացան 13 նորագիր անդամուհիներ, որոնք ուխտեցին ըլլալ հաւատաւոր եւ պարտաճանաչ անդամուհիներ՝ պահելու եւ նորահաս սերունդներուն փոխանցելու ՍՕ Խաչի ավանդը:

Ապա տեղի ունեցաւ 26 ընկերուհիներու պարգեւատրում, ձեռնարկ ՍՕ Խաչի Շրջանային Վարչութեան, ուր պարգեւատրուեցան 30 տարուան վաստակ ունեցող անդամուհիներ:

Հանդիսութեան աւարտին, Տ. Տաթեւ Ա. Քիւլ. Միքայելեան իր սըրտին խօսքը յղելէ ետք «Պահպանիչ» աղօթքով փակեց հանդիսութիւնը:

**Սօսի Պետրեան**

ՀԱՇՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը սրտի անհուն բերկրանքով կ'ողջունէ եւ կը շնորհաւորէ Վարչութիւնը եւ ողջ խաչուհիները մայրերու օրուան առիթով:

Այս տարի պանծալիօրէն պիտի կշեցնէ 100-ամեակը Հայաստանի Հանրապետութեան անկախութեան, որուն մէջ մեծ մասնակցութիւն բերին նուիրեալ հայ մայրերն ու տիկիները:

Յետ պատերազմի տարիներուն, Սուրիահայ Օգնութեան Խաչի Խաչուհիները պատնէշի վրայ մնալով կը շարունակեն գործել հայ ժողովուրդին յատուկ նուիրումի եւ գոհողութեան ոգիով, միշտ տէր կանգնելով հայկական արժէքներուն:

Ձեր տօնը շնորհաւոր:

Բարեյաջող երթ Ձեր բոլոր գործունէութիւններուն:

**ՀԱՇՄ-ի**

**Սուրիոյ Շրջ. Վարչութիւն**



## ԽԱԶԲԱՌ (ՄԽ 244)

# Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Ն Բ



Պատրաստեց Մարինա Զիլբերշեան-Պողիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1									■			
2							■				■	
3			■			■			■			
4			■								■	
5			■				■					
6		■			■				■		■	
7												
8			■			■					■	
9			■				■				■	
10												■
11		■		■								
12								■		■		

### Հորիզոնական

- 1- Լեռներու վրայ տափարակ տարածութիւն: Հակառակ՝ պտոյտ:
- 2- Կենդանիներու խումբ: Դել:
- 3- Հակառակ՝ շաղկապ: Տառի մը հարեանները: Յոգնակերտ մասնիկ: Լաց:
- 4- Իրերայաջորդ տառեր: Հակառակ՝ տարածքի միաւոր: Հակառակ՝ յստակ:
- 5- Յարաբերական դերանուն: Պոչ: Կրան երկաթ ծեծելու պողպատ:
- 6- Հակառակ՝ ցուցական դերանուն: Նուագարան մը:
- 7- Սլացք: Հակառակ՝ շաղկապ: Հարցական դերանուն:
- 8- Անձնական դերանուն: Սահմանական ներկայի եւ անկատար անց-տալի բայակերտ մասնիկ: Աստուածաշունչին մէջ՝ Յակոբին եղբայրը:
- 9- Տառի մը հարեանները: Վանայ լիճի կղզիներէն:
- 10- Համբուրել: Մեջքէն վերի մասը:
- 11- 5030: Սին:
- 12- Աստուածային: Տառի մը անունը:

### Ուղղահայեաց

- 1- Աւետիք Իսահակեանի բանաստեղծութիւններէն:
- 2- Խառն պղինձ: Սրբուհի մը:
- 3- Հակառակ՝ տարածքի միաւոր: Ծովեզերք: Գաւազակի հարուած:
- 4- Արցախի առաջին դպրոցին վայրը: Գոյութիւն ունին:
- 5- Կոկորդ: Անորոշութիւն ցոյց տուող մասնիկ: Գրական ստեղծագործութիւն:
- 6- Աղբիւր: Հակառակ՝ կռակի ոսկոր: Հայ երգչուհի:
- 7- Հինգշաբթի: Հակառակ՝ առաջին կինը:
- 8- 13-րդ դարու 2-րդ կիսուն հայ կիլիկիան դպրոցի մանրանկարիչ եւ գրիչ:
- 9- Հակառակ՝ տարածքի միաւոր: Հակառակ՝ իգական անուն:
- 10- Խանասորի արշաւանքի յիսնապետը:
- 11- Ֆրանսական քաղաք մը:
- 12- Կիլիկիոյ հայ թագաւոր Լեւոն Բ. ի տիտղոսը: Տառի մը անունը:

## ՍՈՒՏՈՒՆԵՐ (ՄՍ 244)

Տեղադրէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

			1	4				
		6			9		1	4
					3			7
7				1			2	6
	6			9	7	1		5
2		5	3		8			
9	7		6	8				3
		1			4	7		2
		4		5				

## ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 15)

Աւետիք Իսահակեանի հեքիաթներն ու վէպերը շնչելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 15 տառերէ (երկու բառէ) բաղկացած Իսահակեանի հեքիաթներէն մէկը կը ներկայացնէ:

ա	հ	ե	ք	ի	ա	թ	ե
ա	դ	ա	ն	ա	գ	ա	բ
մ	բ	ա	տ	ա	մ	ե	կ
ա	ն	դ	ա	ս	պ	ի	ա
բ	տ	ա	ա	ն	ւ	ի	բ
դ	բ	ա	ն	բ	ը	ո	օ
ը	գ	ա	ս	պ	ա	բ	ը
ա	բ	ե	ւ	ի	մ	օ	տ

«Արդար Մարդը», «Արեւի Սօտ», «Գասպարը», «Աղա Նազար», «Հեքիաթ», «Ուստա Կարօ», երկ

## ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 243)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	վ	է	բ	ջ	ի	ն	բ	ա	ժ	ա	կ	
2	ա	բ	տ	ա	կ					բ	ն	
3	դ	ա				դ	ն	ւ	2	մ	ա	ն
4	ա	խ		ք	ա	կ	տ	է	1		տ	օ
5	բ	տ		ն	մ	ա	բ					
6	2	ի		ւ	ա		ն	ա	խ	պ	ա	
7	ա	բ	ս	ն	բ		ա		օ	տ	ա	բ
8	պ			կ	տ	ա	ւ		ս	ի	տ	ա
9	ա	բ	ա	բ		ն	ն		բ	ն	ա	բ
10	տ	ա	բ	է	գ	ի	բ	ք		ա	բ	
11		բ	ա		է			բ		ա	մ	
12	հ	ի	ն	օ	բ	է	բ	ի	է	բ	գ	ը

### ՍՈՒՏՈՒՆ (ՄՍ 243)

1	4	3	9	8	7	2	5	6
9	6	5	3	2	1	7	4	8
2	7	8	5	4	6	1	9	3
3	5	7	4	1	8	6	2	9
8	1	2	7	6	9	5	3	4
4	9	6	2	3	5	8	1	7
7	3	4	6	5	2	9	8	1
5	8	9	1	7	4	3	6	2
6	2	1	8	9	3	4	7	5

### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 14)

Պահուած բառը՝ «Աղուորները»

## ՀՄԸՄ-Ի ՀԱԼԷՊԻ...

Սկիզբ՝ էջ 15

1000-է աւելի մասնագետներ եւ բանուորներ անդուլ կ'աշխատին: Այդ հսկայ հաստատութեան ճաշարահին մէջ, անոնք մեզ պատուեցին:

Այցելեցինք նաեւ գիտութեան կայաններ, մարզադաշտեր, ուր հազարաւոր գիտնորներ կը ստանան մարզական կրթութիւն եւ կը հետեւին գիտութեան մարզանքի:

Լուսնկայ գիշեր մը, Նեղոսի վրայ փոքր նաւու մը մէջ ընթրիքի հրաւիրուեցանք, ուր ներկայ էին գորավարներ, գնդապետներ եւ բարձրաստիճան սպաներ: Մեզի կ'ընկերանային նաեւ ՀՄԸՄ «Արարատ»-ի ու «Յուսաբեր» մշակութային ընկերութեան պատուարժան անդամները: Նաւը մէկուկէս ժամէն մեզ հասցուց պառածները: Որքան անկեղծ եւ մտերմիկ մթնոլորտ ստեղծուե-

ցաւ այդ նաւուն մէջ, կարելի չէ բացատրել: Մեր կողմէ եղբայր Կարպիս Նալպաստեան արաբերէն լեզուով շնորհակալութիւն յայտնեց գիտութեան կայաններէն, ինչպէս նաեւ Արաբ Միացեալ Հանրապետութեան եւ անոր սիրելի եւ հերոս նախագահ Ն. Վ. Ճամալ Ապտէլ Նասերի յարատեւման եւ յաջողութեան մաղթանքներ ըրաւ: Տոբթ. Ա. Տայեան իր կարգին նուէրներ տուաւ գորավարներուն եւ խումբի խաղացողներուն: Չօրավար Ահմետ Իմամ պատասխանելով եղբայր Կ. Նալպաստեանին բարի գալուստ մաղթեց ՀՄԸՄ-ի խումբին: Յիշելով Հալէպ այցելութեան առթիւ իրենց ընծայուած լաւ ընդունելութիւնն ու անկեղծ վերաբերումը, կրկին շնորհակալութիւն յայտնեց ՀՄԸՄ-ի Հալէպի Վարչութեան եւ մաղթեց, որ ՀՄԸՄ-ի այցելութիւնները յաճախակի դառնան ստեղծուած այս կապը աւելի ամրապնդելու համար:



## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

### ԽՈՅ



Վարպետություն կը գրուցեք եւ իմաստութեամբ կը քննարկէք: Ձեր այցելութիւնները եւ հաղորդակցութիւնները պիտի բազմանան:

### ՅՈՒԼ



Պիտի կերողնանաք անձնական, ընտանեկան եւ տնային հարցերու վրայ: Ընտանիքի անդամներէն մէկուն հարցով պիտի տագնապիք: Դժուար շրջան մըն է:

### ԵՐԿՈՒՐԵԱԿ



Գեղեցիկ շրջան մը պիտի ապրիք ձեր սիրելիներուն եւ բարեկամներուն կողքին: Չգացական շրջան մըն է: Ամուսնան լաւ օրերէն մէկն է եւ բախտաւոր:

### ԽԵՅՁԵՏԻՆ



Կանուխ գացեք աշխատանքի: Կարգաւորեցեք ձեր գործերը եւ առաջնահերթութիւնները: Մի՛ ծուլանաք, որպէսզի յաջողութիւն արձանագրէք:

### ԱՌԻԾ



Պիտի գայրանաք, բայց մի՛ հետեւիք ձեր գայրոյթին: Զեռու մնացեք խառնաշփոթ վիճակներէն: Փնտռեցեք խաղաղութիւն եւ հանդարտութիւն՝ ձեր շրջապատին մէջ:

### ԿՈՅ



Պետք է ձեր կարողութիւնը ցոյց տաք՝ բարեացակամ գտնուելու այլոց նկատմամբ: Բացասական մի՛ ըլլաք ու մի՛ գանգատիք ճնշումներէն:

### ԿԵՒՈՔ



Ձեր տրամադրութիւնը եւ եռանդը պիտի վերագտնէք: Պատասխան պիտի ստանաք ձեր հարցադրումներուն: Նոր հարց մը պիտի ծագի:

### ԿԱՐԻՃ



Մի՛ արատաւորեք ձեր անունը: Ճնշումները շատ են. որպէս քննութիւն ընդունեցեք գ անունը: Տագնապեցնող շրջան մըն է, բայց յաջողելու առիթ ալ ունի:

### ԱՂԵՂՆԱՒՈՐ



Խմբային աշխատանքը յարմար է ձեզի: Պիտի ուրախանաք, երբ մարդիկ հասկնան ձեզ: Պիտի յաղթահարեք բոլոր դժուարութիւնները եւ հասնիք յաջողութեան:

### ԱՅԾԵՂՋԻՐ



Ձեր նիւթական առաջնահերթութիւնները կարգաւորեցեք: Մի՛ սպասեք, որ ձեր բարեկամները բարեացակամ գտնուին ձեզի հանդէպ: Անոնց կարիքները պիտի շատնան:

### ՋՐՅՈՍ



Մի՛ արհամարհեք մակրամասնութիւնները, որոնք կրնան ձեր տկար կէտը ըլլալ: Ձեր տեսակէտը յստակացուցեք: Դուք զօրաւոր միտքերու հեղինակ եք:

### ՋՈՒԿ



Ընտանեկան գբաղումներէն ձեր ձեռքը պիտի յոգնեցնեն ու ծանծրացնեն: Ընտանեկան խնդիրները պիտի ուշացնեն ձեր գործերն ու պարտաւորութիւնները:



Սեւան Ազարիկեան-Պարմաքսեան

## ՀԱՏԱՊՏՈՒՆԵՐ

Վայրի եւ մշակուող բազմամեայ բոյսեր են հատապտուղները, որոնցմէ կը ստանանք հիւթալի, չբացուող եւ բազմամերմ պտուղներ: Անոնք կը պարունակեն հանքային աղեր, շաքար, կենսանիւթեր ու բուրու մասաւետ նիւթեր: Կ'օգտագործուին թարմ եւ վերամշակուած (խիւս, օշարակ, անուշ, դոնդող), հրուշակեղէնի եւ գովազուցիչ ըմպելիներու արտադրութեան մէջ:

Այս խումբին կը պատկանին ազնուամորին, կարմիր եւ սեւ հաղարջը, լորամրգին, հապալաւը, մոշը, թուրը եւ ելակը:

### Ազնուամորին

Հարուստ է C Կենսանիւթով, անոր թարմ հիւթը կ'իջեցնէ ջերմութիւնը եւ կը պակսեցնէ քաթարաքթի հաւանականութիւնը, իսկ անոր տերեւներու եփուկը օգտակար է փսխումներու պարագային:



### Հապալաս

Հապալասի հիւթը կը նպաստէ ջերմութիւնը իջեցնելու, իսկ տերեւներով պատրաստուած թէյը օգտակար է երիկամունքի քարային հիւանդութիւններու եւ ստամոքսի խանգարումներուն պարագային:



### Սեւ Հաղարջ

Հարուստ է A, B, C, E եւ K կենսանիւթերով, ինչպէս նաեւ երկաթով եւ ֆոսֆորով: Ան կը կանխէ քաղցկեղը, սրտանօթային հիւանդութիւնները եւ տարեց մարդոց մտային կարողութիւններու թուլացումը: Անոր հիւթը, մեղրի հետ խառնուած, լաւագոյն միջոցն է դեղնախտի ընթացքին լեարդի գործունեութիւնը վերականգնելու համար:



### Սեւ հաղարջով պատրաստուած թէյերը

Սեւ հաղարջով պատրաստուած թէյերը ունին հակաբորբոքային յատկութիւններ, իսկ անոր հիւթը անփոխարինելի բուժիչ միջոց է Նշիկաբորբոքումի պարագային: Սեւ հաղարջի տերեւներէն պատրաստուած թուրմը կ'օգնէ երիկամներէն դուրս բերելու համար քարերը եւ յօդերը մաքրելու կուտակուած աղերէն: Ան կը բարձրացնէ մարմնի դիմադրողականութիւնը փոխանցիկ հիւանդութիւններուն ընթացքին եւ կը կանխէ արեան տկարութիւնն ու գերճնշումը:

### Թուր

Հնագոյն ժամանակներէն ան դեղաբոյս կը համարուի չինական, հնդկական եւ ճափոնական բժշկութեան մէջ: Հարուստ է կենսանիւթերով եւ օգտակար միկրօտարրերով:



### Հասուն պտուղը

փորը թուլացնող յատկութիւն ունի, չհասունցածը՝ պնդացնող: Սեւ Թուրի խտացուած հիւթը օգտակար է ստամոքսի եւ լեարդի կանոնաւոր աշխատանքին

համար, կը նպաստէ նաեւ արեան մէջ հեմոկլոպինի բարձրացման եւ ապաքինող ազդեցութիւն ունի վերքերու համար: Ան որպէս կոկորդը որդողելու միջոց կը գործածուի բերնի խոռոչի խոցերու պարագային:

Չինացիները ճերմակ թուրի տերեւներով կը բուժեն ջերմութեամբ եւ գլխացաւերով ուղեկցող մրսածութիւնը: Ան կը համարուի միզամուղ, հազը փափկացնող եւ քրտնաբեր միջոց: Իսկ անոր պարունակած ֆոսֆորին պատճառով, շատ օգտակար է յղի կիներու եւ երեխաներու համար:

Շաքարախտի եւ ճարպակալման պարագային խորհուրդ կը տրուի անսահմանափակ քանակութեամբ թուր օգտագործել:

Սեւ թուրի սննդային արժէքը կրկնակի է համեմատած ճերմակի հետ:

### Մոշ

Մոշի հիւթը կը նպաստէ լեարդի եւ փայծաղի բորբոքումներու բուժման: Անոր տերեւներուն մզուածքը ունի հակաբորբոքային ազդեցութիւն՝ պակսեցնելով թարախային վերքերու ցաւը, իսկ ճիւղերու թուրմով կըրնանք մեր գլուխը լուալ, ինչ որ կը նպաստէ մազերու աճման: Ան կը բուժէ եքզեման:



### Ելակ

Ելակը կը պարունակէ մեծ քանակութեամբ հակաօքսիտաններ, այդ իսկ պատճառով կը համարուի քաղցկեղի դեմ պայքարող պտուղ ու կարեւոր նշանակութիւն ունի սրտանօթային համակարգի պահպանման համար:



Ան, իր պարունակած մակնիզիոլմին եւ հանքային նիւթերուն շնորհիւ, մեր մարմնին կ'ապահովէ ջերմութեւ կը պահպանէ ոսկորներու ամրութիւնն ու ակոսներու առողջութիւնը:

Տերեւներէն պատրաստուած թէյը կ'օգնէ ստամոքսի խանգարումներու եւ անքնութեան ընթացքին, կը կարգաւորէ նիւթափոխանակութիւնը եւ արեան բարձր ճնշումը:

Հասուն ելակի հոտը կը պարունակէ մօտաւորապէս 50 անուշաբոյր նիւթեր, որոնք մարդուն կու տան բարձր տրամադրութեան զգացում եւ կ'օգնեն յաղթահարելու գերճնշածութիւնը:

Ելակը կը բարելաւէ նաեւ յիշողութիւնը:

Ելակը կը պարունակէ բաւարար քանակով պրոն, որուն շնորհիւ մաշկը կը դառնայ փափուկ եւ առածգական: Այդ պատճառով ելակի դիմակները բարեբար ազդեցութիւն ունին մաշկին վրայ:

### Ելակով Զոր Մաշկի Դիմակ

Եթէ ունիք շատ չոր մաշկ, մասնագետներ կ'առաջարկեն հետեւեալ դիմակը:

-2 ելակ, 1 հաւկիթի դեղնուց եւ 1 թէյի դգալ մեղր: Այս խառնուրդը քսել դեմքին, սպասել 20 վայրկեան, ապա դեմքը մաքրել բամպակով ու լուալ գաղջ ջուրով:





## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԲԱՐՈՅԱԿԱՆ...

Մկհրթ Էջ 8

մէյ մէկ դաստիարակչական օրինակներ ըլլալ ներկայ սերունդին... Դաս առնենք...

Բարոյական պարտականութեան դաս առնենք մեր մեծերէն, որպէսզի օր մըն ալ մեր հերթին մենք ալ դաս տանք, դաս ըլլանք, եթէ կ'ուզէք, գալիք սերունդին:

Դաս առնենք...

Բիւր յարգանք ՅՄԸՄ-ի շարքերէն ներս տարիներ շարունակ իրենց ծառայութիւնը բերող իւրաքանչիւր ՅՄԸՄ-ականի:

### «ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ...»

Մկհրթ Էջ 8

անոնք հայրերուս ու եղբայրներուս տառապանքը կ'արտացոլեն: Հայրերս ու եղբայրներս, որոնք անտրտունջ չաչարուեցան, խոշտանգուեցան, գնդակօծուեցան, անարգօրէն սպանդանոցներ քշուեցան: Անքիծ կոյտեր անգութօրէն բռնաբարուեցան ու խոշտանգուեցան...: Ի վերջոյ այնքան ահագնացան մարդկութեան թշնամիներուն վայրագութիւնները եւ սաստկացան անկարագրելի անօրէնութիւնները, որ աչքերէն արցունքի փոխարէն արիւն, իսկ սիրտերէն արեան փոխարէն մաղձ հոսեցան:

Ի տես այս բոլորին, սգա՛, սի՛րտ իմ, այն բիւրաւոր նահատակներուն համար, որոնք անխօս ինկան անողոր թշնամիին ձեռքաւ:

Գիրքը բաղկացած է 5 մասերէ: Առաջին մասը կ'ընդգրկէ անցեալի դէպքերուն պատմութիւնը (1-66): Երկրորդ մասը՝ ընդհանուր պատերազմի (առաջին համաշխարհային) աղետները սկիզբէն մինչեւ 1915 թուականի Մայիսի վերջը (68-147): Երրորդ մասը՝ լուրեր բանտարկութիւններու, ջարդերու, կանանց ամեւանգումներու եւ այլ սարսափելի դէպքերու մասին, որոնք տեղի ունեցան Մարտինի մէջ՝ 1915-ի Յուլիսէն մինչեւ Հոկտեմբեր (148-331): Զորորդ մասը՝ ճեղքիտ երկրամասի քաղաքներէն՝ Ուրֆայի, Տիգրասա կերտի (Ամիթ), Ռաս ու Այնի, Տեր Զօրի, Թոր Ապտինի (Միտիաթ), Սղերթի եւ այլ քաղաքներու մէջ տեղի ունեցած ջարդերուն մասին լուրեր (332-444):

Հինգերորդ մասին մէջ կան յաւելումներ ջարդերու հետեւանքներուն մասին. ինչպէս օրինակ՝ քրիստոնեաներու ունեցուածքներու յափշտակում եւ վաճառում, գերեզմաններու սրբապղծում եւ թալանում, քոչուոր ցեղախումբերու մուտք Մարտին քաղաք եւ այլն: Աշխատութիւնը կ'աւարտի սուրիանիներու առաջնորդ՝ Գերայ. Գաբրիելի դէմ ի գործ դրուած բռնութիւններու նկարագրութեամբ, երբ ան թշնամիներու կողմէ արքայութեան քանտարկուած էր (445-499):

«Վստահ եղիր, սիրելի՛ ընթերցող, որ այն ինչ չենք տեսած սեփա-

կան աչքերով, տեղեկացուած ենք ականատեսներու կողմէ, այնպէս որ կարծէք նախախնամութեան յատուկ կարգադրութեամբ այդ եղելութիւնները փրկուած են մոռացութեան ճիրաններէն, որպէսզի տեղեկանանք եւ մեր կարգին տեղեկացընենք բոլոր կատարուածին մասին՝ բացայայտելու յանցագործները եւ խաղաղեցնելու հոգիները անմեղ գոհերուն: Նոյնպէս հաստատ իմացիր, որ այնքան շատ են այդ ցաւալի լուրերը ու այնքան տխուր են իրողութիւններու պատկերները, որ կլանած են ամբողջ էութիւնս: Ուստի ներող եղիր, որ մեր թերի ուղեղին ներած չափով պիտի փորձենք քեզի ներկայացնել այդ դէպքերուն միայն կարեւորագոյնները»:

Յառաջաբանը վերջ կը գտնէ աղօթքով:

(շարունակելի)

### ԳԻՐՔԻ ԵՒ...

Մկհրթ Էջ 10

Ան շատ մեծ ազդեցութիւն ձգեց մեր բոլորին վրայ: Մեր գերդաստանին ամենէն մեծին մահով, տունը պարպուեցաւ, բայց անոր ծայրը դեռ կը հնչէ տան մէջ: Ան գնաց եւ իր շուրջիներուն միայն լաւ յիշատակներ թողուց: Ինծի թանկագին նուէր մը ձգեց՝ Աստուածամօր նկարը, որ ինծի նուիրած էր անուանակոչութեանս օրուան առիթով, վեց տարի առաջ: Այդ նուէրը ես կը պահեմ ննջասենեակս, սնարիս կողքին:

Լաւ մարդը մահէն վերջ իր լաւ գործերով կը յիշուի: Յիշատակը անթառամ մնայ, հորքո՛ւր: Զեզ շատ պիտի կարօտնամ:

### Ի՞նչ Կ'ըսենք...

Մկհրթ Էջ 10

Ե միայն դպրոցէն ներս, կամ՝ մեր գաւկին անունը գերազանցներու ցանկին մէջ տեսնելը:

Այսօր, մեր աշակերտը որքանո՞վ կրնայ արտայայտել իր մտքերը բանաւոր թէ գրաւոր ձեւով, եթէ չունի բառամթերք, մտային պաշար: Ուրկէ՞ պէտք է ապահովել այս բոլորը, եթէ ոչ՝ տպագիր թէ առցանց գիրքերէն:

Եթէ մեր գաւակներէն պիտի պահանջենք հայերէնը սիրել եւ ճիշդ օգտագործել, նախ մենք մեզ պէտք է սրբագրենք:

Մեր հզօր մայրենին չաղաւաղենք ուրեմն: Սփիւռքի մէջ կրկնակի պարտաւորութիւն ունինք գայն պահելու, պահպանելու:

Յեղասպանութենէն վերապրողները նախ եկեղեցի ու դպրոց հիմնեցին, ոչ թէ շքեղ տուներ: Անոնք հիմնեցին հայ լեզուի ու ազգապահպանման տաճարները իրե՛նց իսկ հոգիներուն մէջ:

Իրե՛նց կը պարտինք հայապահպանումը, սակայն պարտաւոր ենք պահել ու աճեցնել անոնց ցա-

նած սերմերը՝ հայապայել կեանք մը ապրելու համար:

Տարին անգամ մը գրադարան այցելելով, կամ ցեղասպանութիւնը յիշելով որպէս հայ չենք գոյատեւեր: Հայրենիք, լոկ որպէս գրօսաշրջիկ, այցելելով չենք հայանար: Ժամանակակից միջոցներու օգտագործումով, սերունդներու մտաւոր ու հոգեկան կարելիութիւնները գարգացընելով կը յառաջանանք:

Մեր միութիւններուն եւ հաստատութիւններուն ազգապահպան ճիգերը չենք ուրանար, բնականաբար, սակայն մեր աշխատանքին նոր որակ, իսկ մտածումին խորք տանք՝ զերծ մնալով մակերեսային մօտեցումներէ:

Արմատական փոփոխութիւնները տեղի կ'ունենան քիչ մը անելի ազգասեր ըլլալով, մայրենի լեզուն չարհամարհելով, մասնաւոր՝ օտարամոլութեան ու ծուլութեան դէմ պայքարելով: Նորարար աշխատանքի կարիքը ունինք բոլորս:

### ՀԱՅ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ...

Մկհրթ Էջ 6

Արուսեանի, Աթէշեանի ու խորհրդրդակցական մարմինն մէջ առկայ բազմատեսակ մարդիկ չենք ուզեր, որ մեր վիզիոն փայտեն» ըսելն ալ լիովին իրաւացի պահանջք է: Սակայն, նման իրավիճակի պետութենէն «ազգային փոքրամասնութիւններու համար օրէնքի» սպասելը անիմաստ է, այսպիսի օրէնքներ միշտ անուն ունեցած են, բայց բովանդակութիւն չեն ունեցած, ոչ ալ կ'ունենան, դեռ անելին՝ «փոքրամասնութիւններու համար պետութեան կողմէ յատուկ օրէնքի անհրաժեշտութիւն սկիզբէն ալ գոյութիւն չէ ունեցած»:

Այնուամենայնիւ «խայտառակութիւն է, ըլլալիք բա՛ն է այս, ասոր մի նայի՛ր»-ի նման արտայայտութիւններ ընելու ժամանակը չէ: Ու եթէ նոյնիսկ պաշտպանենք տեղի ունեցածը ու անելի աշխարհիկ, ան-

լի աշխոյժ, անելի ժողովրդավար նոր ճամբաներ փնտռենք, ժամանակն է, որ ատոր համար փորձենք կարելիութիւններ ստեղծել: Համայնքի բոլոր կառոյցները, բոլոր դէպքերը, առկայ ճգնաժամը քննարկելու, անոր մասին խօսելու, տեղի ունեցածին հակադարձելու վայրեր կրնան ըլլալ: Ատիկա ըլլալ հարսանեկան սրահ, թատրոն, համերգ, ցուցադրութիւն, պատարագ եւ ընդհանրապէս, բոլորիս շանքերով ու աշակցութեամբ գոյութիւնը պահպանող կառոյցներուն մէջ կազմակերպուող ձեռնարկներ, որոնց կը մասնակցինք, ատոնք այն վայրերն են, ուր մենք ամենաշատը իրաւունք ունինք ձայն բարձրացնելու:

### ԱՅՆ, ԻՆՉ ՊԻՏԻ ԹՈՂՈՒՆՔ ՄԵՐ ՅԱՋՈՐԴ ՍԵՐՈՒՆՆԵՐՈՒՆ

19-րդ դարու երկրորդ կիսուն պատրիարքներու ամենակարեւոր գործը հայութեան ղեկավարման հիմնաքարը համարուող Կանոնակարգը եղածին պէս ոյժի մէջ պահելն էր, քանի որ ամեն պահ ան կըրնար վերացուիլ: Ճիշդ է, որ վերջին հարիւր տարուան ընթացքին պետական քաղաքականութիւնը միտուած է անոր, որ հայ ղեկավարութեան մէջ առկայ բոլոր համակարգերը չգործեն, եւ վերջիններու ստացած իրաւունքները ան օգտագործել իր կամքով՝ ժամանակի օրէնքներուն համաձայն: Վերջին 10 տարիներուն տեղի ունեցած դէպքերն ու պատճառները անոր կիսակը ատոր հետեւանքներն են: Կ'ապրինք ժամանակաշրջան մը, երբ սեփական հասարակութեան պատմութենէն բխող մեր կառոյցներուն թոյլ չեն տար աշխատիլ, միջազգային պայմանագիրներու դրոյթները արդէն իսկ չեն գործեր, առկայ կառոյցներու եւ ղեկավար կառոյցներու բովանդակութիւնը կը վերացնեն: Ասոնց հետ մէկտեղ, կը մտածեմ, որ մենք մեր յաջորդ սերունդներուն փակուղի տանող ճգնաժամէն անկախ՝ ուրիշ բան ալ պէտք է փոխանցենք:

Ս.Օ.ԽԱԶԻ ԾՐՁԱՆԱՅԻՆ. ՎՐԶԹ. ԴԱՍԻՔՐԱԿԶԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

ԴԱՍԱՆԾՕՍՈՒԹԻՒՆ

Նիւթ

«ՀԱՅ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՍԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ»

Շաբաթ 21 Ապրիլ, 2018 Կեսօրէ ետք ժամը 4:00-ին

ԱՄԺ Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Մեյրոնեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԱՐԵՏԻՄ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունից հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 15 Ապրիլ 2018-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչի եկեղեցոյ մէջ, Նոր Գիւղ - Հայկա:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահէն ներս:





Ռաֆֆի Միլախեան

## ՀԱՅԿԱԿԱՆ

### Հայաստանի Հաւաքականի Գլխավոր Մարզիչ Արթուր Պետրոսեանը Հրաժարեցաւ

6 Ապրիլին ՀՖՖ շտապ-բնակարանին մէջ տեղի ունեցաւ ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետեանի եւ Հայաստանի Ազգային հաւաքականի գլխավոր մարզիչ Արթուր Պետրոսեանի հանդիպումը, ուր քննարկուեցան Հայաստանի Ազգային Հաւաքականի մրցոյթները: Զննարկման արդիւնքով Արթուր Պետրոսեան ներկայացուց իր հրաժարականը, որ ընդունուեցաւ Ռուբեն Հայրապետեանի կողմէ: ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետեան եւ հաւաքականի հրաժարեալ մարզիչ Պետրոսեան փոխադարձ շնորհակալութիւն յայտնեցին համատեղ աշխատանքի համար:



### Հենրիկ Մխիթարեան Վիրաւորուեցաւ

Լոնտոնի Արսենալի եւ Հայաստանի Ազգային Հաւաքականի կիսապաշտպան Հենրիկ Մխիթարեան ծնունկէն վնասուելով հաւանաբար չարուսակէ մրցաշրջանի մնացած մրցումները: Ըստ անգլիական Mirror-ին, 29-ամեայ ֆութպոլիստը հաւանաբար վեց շաբթուան տեւողութեամբ հեռու մնայ դաշտերէն: Յիշենք, որ Մխիթարեան վնասուեցաւ Մոսկուայի ԲԿՄԱ-ի դէմ Եւրոպայի լիկայի քառորդ եզրափակիչի առաջին խաղին՝ 61-րդ վայրկեանին: Արսենալի գլխավոր մարզիչ Արսեն Վենկեր յայտարարեց, որ կիսապաշտպանի իրավիճակը ստոյգ կը դառնայ մանրակրկիտ հետազօտութիւններէ ետք:



Հայազգի խաղողը, Անգլիոյ ֆութպոլի ֆիտնեսի կոմիտէի «Փրեմիեր-լիգ»-ի 32-րդ հանգրուանի Սթըք Սիթիի դէմ տեղի ունեցած մրցումէն առաջ, ստացաւ Փետրուար ամսուան լաւագոյն ֆութպոլիստի մրցանակը: Ան թղթակիցներուն հետ հանդիպումի ընթացքին ըսաւ. «Ճատ ուրախ եմ յաղթանակին եւ ամսուան լաւագոյն ֆութպոլիստի կոչումը ստանալուս համար: Շնորհակալ եմ բոլորէր»:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### Ծանօթացում Ռուսիա 2018-ի Մասնակից Հաւաքականներու Պատմականին

«ԹԻԻ - 18»  
Գերմանիա

Գերմանիոյ ֆութպոլի ֆետերասիոնի պատմութիւնը սկիզբ առաւ 1900 թուականին, որմէ չորս տարի ետք ան միացաւ Համաշխարհային ֆութպոլի, իսկ 1954-ին՝ Եւրոպայի ֆութպոլի Դաշնակցութեան: Համաշխարհային



ֆութպոլի մրցաշարի պատմութեան ընթացքին, ան եղաւ լաւագոյն հաւաքականներէն մէկը, որ մասնակցութիւն բերաւ բոլոր մրցումներուն, բացի 1930 եւ 1950 տարեշրջանի մրցումներէն: Չորս անգամ արժանացաւ աշխարհի ֆիտնեսի 1954-1974-1990-

2014: Եւրոպայի ֆիտնեսական մրցումներուն Գերմանիա եղաւ լաւագոյնը՝ արժանանալով երեք տիտղոսներու՝ 1972-1980-1996 տարեշրջաններուն: Միջազգային առաջին մրցումը ունեցաւ 1908-ին, որուն ընթացքին 5 - 3 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ: Չուիցերիոյ կազմէն: Գերմանիոյ հաւաքականին հետ ամենէն շատ խաղող մարզիկը Լոթար Մաթեոսն է՝ 150 մրցում, իսկ ամենէն շատ կոլ նշանակողը՝ Միրոսլաւ Զլոզէն՝ 71 կոլ: 2008-էն ի վեր հաւաքականի մարզիչի պաշտօնը վստահուած է Իւխիմովիկին, որուն հետ հաւաքականը արձանագրեց տպաւորիչ արդիւնքներ: Հաւաքականի պաշտօնական տարազին գոյնը ճերմակն է, կուրծքի բաժինին վրայ Գերմանիոյ դրօշակի գոյներն են, իսկ երկրորդական տարազին գոյնը սեւով կանաչ է:



## ՀՄԸՄ-Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱԾԻՐԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ Ա. ԽՈՒՄԲԻՆ ԵԳԻՊՏՈՍ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

(Ա. տարի, թիւ 33)

30 Յունիսի 1958-ին, ՀՄԸՄ-ի Ա. խումբը առաջնորդութեամբ միութեան ատենապետ եղբայր տղոթք. Ա. Տայեանի, վարչութեան անդամ եղբայրներ՝ Կարպիս Նալպանտեանի, Սահակ Տօնիկեանի եւ Չաւեն Սապունճեանի օդային ճամբով Գահիրէ մեկնեցան: Խումբին կ'ընկերանար Նաեւ եղբայր Լ. Մասպանաճեան եւ Ճորճ Տայեան որպէս ֆութպոլի խումբի պատասխանատու:

Եգիպտոսի ՀՄԸՄ «Արարատ»-ի վարչութեան նախածնութեամբ ու ջանքերով իրականացած այս փոխադարձ այցելութիւնը մեծ խանդավառութիւն ստեղծեց եգիպտահայութեան մօտ:

Մէկ Յունիսին Գահիրէի օդակայանը ժամանող Հալէպի խումբը դիմաւորելու եկած էին գիւղորական խումբն ու բարձրաստիճան գիւղորականներ, ինչպէս նաեւ եգիպտահայութեան ծանօթ ազգայիններ, եւ ՀՄԸՄ «Արարատ»-ի վարչութեան անդամները:

Մենք սոյն գրութեամբ նպատակ չունինք տեղի ունեցած ֆութպոլի երկու մրցումներու նկարագրականը տալ. նկատելով որ «Մարզաշխարհ»-ի յաջորդող էջերուն մէջ լայն տեղ տրուած է անոնց: Մրցումներու մասին պիտի բաւականանանք միայն քանի մը տողեր արձանագրելով: Հալէպի խումբը ինքզինք գտաւ միջազգային առումով մարզուած եւ կազմակերպուած երկու զօրաւոր խումբերու դէմ յանդիման: Մեր խումբը, տեղի տալով հանդերձ այդ գերազանց ուժերուն առջեւ, կրցաւ ցուցաբերել գեղեցիկ ու ներկայանալի խաղարկութիւն մը, որով երկու մրցումներուն ալ հանդիսականները գեղեցիկ եւ կանոնաւոր խաղարկութեան հանդիսատես ըլլալու հաճոյքը վայելեցին: ՀՄԸՄ-ի խումբը երկու մրցումներուն ալ պարտուելով հանդերձ, բարոյական մեծ վարկ ապահովեց: Հակառակ Ա. մրցման մեր խումբի չափաչափիչ պարտութեան, երկրորդ հանդիպումին հանդիսականներու թիւը կը գերազանցեր, հասնելով մօտ 15.000-ի:

Մենք կ'ուզենք ծանրանալ այս այցելութեան բարոյական յաղթանակին վրայ:

Կարելի չէ թերթի այս նեղ սիւնակներուն մէջ պատկերացնել ՀՄԸՄ-ի խումբին վայելած հիւրասիրութիւնն ու գուրգուրանքը, զորս գիւղորական խումբի դեկավարութիւնը, նաեւ ՀՄԸՄ «Արարատ»-ը եւ հայ ժողովուրդը ցոյց տուին:

Բառին բովանդակ առումով Հալէպի խումբը վայելքի եւ ուրախութեան օրեր անցուց: Բարձրաստիճան գիւղորականներ մեզ շրջապատեցին եղբայրական սիրով: Անոնք նիւթական ու բարոյական հնարաւոր բոլոր աջակցութիւնը ընծայեցին մեզ: Շնորհիւ անոնց, մենք արժանացանք բարձր ընդունելութեանց պետական եւ գիւղորական շրջանակներուն կողմէ: Կըրցանք այցելել ու վայելել Եգիպտոսի մեծութիւնն ու գեղեցկութիւնը, տեսնել անոր պատմական ու արդիական հոյակապ հաստատութիւնները: Եգիպտոս մեծ է եւ գեղեցիկ: Շնորհիւ Նեղոսին, անապատը դարձած է ծաղկաստան ու ծառաստան:


Դարերու տընաջան աշխատանքը զայն վերածած է դրախտի: Ճարտարաբանութիւնը ճարտարապետութեան մէջ ան հսկայաքայլ յառաջ դիմած է: Ինքնաբաւ դառնալու իր մեծ ճիգին մէջ ան կրցած է մեծ նուաճումներ կատարել:

Յուցափեղկերու մէջ տեսնուած բոլոր տեսակի ապրանքները կրնան մրցիլ եւրոպականին հետ: Ահա հոս է գաղտնիքը անոր յաջողութեան եւ ապագայ մեծութեան:

Չիւղորականութիւնը առիթ եւ միջոցներ ստեղծեց մեզի Եգիպտոսի բոլոր տեսարժան հաստատութիւններն ու հնութիւնները այցելելու:

Անոնք մեզ առաջնորդեցին գինագործարան. մենք տեսանք արդիական կազմածներով կազմակերպուած հսկայ գինագործարան մը, ուր

Լ. ՄԱՍՊԱՆԱՃԵԱՆ  
Շար.՝ 19 12





### ՆԱՅԱՍԱՆԻ...

Սկզբը՝ էջ 1

ղաքակիրթ ժողովուրդ դառնալու յաղթանակով շահուած իրաւունքի, որուն 100-ամեակի տօնախմբութիւնները անկասկած երկրաւոր սահմաններէն անդին կը հասնին:

Մեր սերունդը ականատես եղաւ Յայաստանին եւ Յանրապետութեան միջեւ տեղաւորուած ամբողջատիրական վարչակարգին՝ Սովետական Սոցիալիստական, սակայն անկախութիւնը իր գերաթիւը ներկայութեամբ ինքզինք պարտադրեց եւ դարադարձէն առաջ վերագտանք անկախութիւնը նոր ու ժամանակակից դառնալու բոլոր հաւանականութիւններով:

Մենք նոր ժամանակներու չափանիշերով 100 տարուան վերապրած պետութիւն ենք: Մենք 100 տարի անընդմիջաբար (քաղաքական տարակարծութիւններով հանդերձ) գոյատեւած հանրապետութիւն ենք: Եթէ մարդիկ (գիտական կամ քաղաքական մասնագիտութեամբ) մեր պատմութեան վերջին 100 տարին իրերայաջորդ երեք ժամանակներու բաժնէն անգամ, եթէ դրօշին, գերբին ու հիմնին մէջ տրամաբանութիւններ ալ տեղաւորեն, սակայն դարձեալ գնայունը վարչակարգն է, իսկ անոնց մէջ մնայունը «Յայաստան»ն ու «Յանրապետութիւն»ն է՝ Յայրենիքն է:

Մեր հաւաքական ու միասնական յաղթանակի 100-ամեակը եւ մէկ դարու փորձառութեան «դրամագլուխ»ը պարտինք վերածել ինքնահատատման հիմք-սկզբունքի: Այս է յաջորդ հարիւրամեակի հրամայականը: Մենք պարտաւոր ենք միասնական գործել ու յառաջանալ: Մենք իրաւունքը ունինք որքան մեր առաւելութեանց, նոյնքան մեր թերութեանց մասին առարկայական եւ տրամաբանական ձեւերով արտայայտուի: Մենք մեր աչքի բիբին ու մաքրամաքուր սրտի սիրոյ պէս պարտինք գուրգուրալ ամբողջական հայութեամբ Յայաստանի մեկնակէտին՝ Յայաստանի Յանրապետութեան վրայ: Առանց սնապարծութեան «հպարտանալ» մեր ներկայ ունեցածով եւ իրագործումով, բայց նաեւ իրատեսութեամբ լեցուն լաւատեսութիւնը ունենալ Յայաստանը վերածելու ոչ միայն ամէն հայու Տան, այլեւ մարդկութիւնը հիւրընկալող Տան:

Մենք եւս մեր կարգին հիւրընկալուեցանք եւ այդ ազնուական հոգին ու զգացումը տեսանք մեր պատմութեան ամենադժիւմ օրերուն՝ Յայոց Ցեղասպանութեան ժամանակ, երբ սուրիական անապատներուն ու ասպնջական ժողովուրդին մօտ վերապրեցանք: Յայրենիքը յափշտակուեցաւ մեզմէ, սակայն նոր բնակատեղին այնքան ընտանի ու հարազատ դարձուցինք, որքան մեր բջիջներուն եւ հաւաքական յիշողութեան մէջ ապրող հայրենիքը: Այս իմաստով ալ, հակառակ Սուրիոյ տագնապալի տարիներուն եւ աւերածութեան, հաւատալով անկեղծ եւ երկարակեաց բարեկամութեան, մենք՝ սուրիաբնակ սուրիահայերս, ինչպէս Յայոց Ցեղասպանութեան 100-ամեակին, նոյնպէս այսօր Յայաստանի Յանրապետութեան պանծալի 100-ամեակին մեր մասնակցութիւնը կը բերենք Սուրիոյ եւ Յայաստանի բարեկամութեան ամրապնդման, միշտ մաղթելով յարութիւն եւ կեանք երկու հայրենիքներուն:

Եկէ՛ք փառք վերառաքենք Ամենագօր Մարդասերին մեր հայրենիքն ու ժողովուրդը պահելու եւ պահպանելու համար:

Եկէ՛ք «բոլորով սրտի» աղօթենք հայրենիքի անսասանութեան համար:

Եկէ՛ք խոնարհիկը մեր նահատակներուն պայծառ յիշատակին դիմաց:

Եկէ՛ք քաղցրահամ խոնկով օրհնենք մեր հետններուն լուսափայլ ներկայութիւնը:

Եկէ՛ք, ի վերջոյ գիրար շնորհաւորենք ազատ, անկախ Յայաստանի Յանրապետութեան 100-ամեակին, որպէսզի մեր հաւաքական երազը կարենանք իրականութեան վերածել ամբողջական Յայաստանով:

Յարուցեալին շնորհքն ու օրհնութիւնը բոլորիս վրայ ըլլայ յաւետ:

## ԳԱՄԻՆԻ ՄԵՋ ՍԿԱՈՒՄԻ ՕՐՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՍԿԱՈՒՄԻ ՕՐՈՒՆՆԵՐԻ ՆՈՒԻՐՈՒՄ ՓԱՌԱՌՐ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ Ճեզիրիի Յայոց Առաջնորդական Փոխանորդ Յոգ Չ. Տ.Ռուբէն Աբղ.

փուլերը՝ ողջունելով ՅԱԸՄ-ի 100-ամեայ վաստակը, «Միշտ Պատրաստ» կարգախօսով շարունակ.



Նալպանտեանի, կազմակերպութեամբ Սկաուտ Խորհուրդին, Կիրակի, 25 Մարտ 2018-ի երեկոյ-

կելու նախնիներուն աւանդը:

Այնուհետեւ վրայ հասաւ ձեռնարկին գեղարուեստական ու մարզական բաժինը: Գայլ-արծուիկները ներկայացուցին ժողովական կեանքը նկարագրող թատերական պատկեր մը, ապա նաեւ հայկական պար մը:

Սկաուտութեան խօսքը արտասանեց մասնաճիւղիս փոխմբապետուհի Նանար Սարգիսեան, որ շեշտեց ՅԱԸՄ-ի եւ Սկաուտութեան անբաժանելի կապը՝ դիտել տալով, որ Սկաուտութիւնը սիրտն է ՅԱԸՄ-ին: Սարգիսեան դրուատիքով արտայայտուեցաւ ծնողներու ազգային, բարձր գիտակցութեան եւ համագործակցութեան ոգիին մասին, որոնց շնորհիւ ՅԱԸՄ-ի շարքերը մշտապէս կը թարմանան նոր ուժերով:

Ապա տեղի ունեցաւ մասնաճիւղի եռամեայ գործունեութիւնը ներկայացնող տեսերիզի մը ցուցադրութիւնը, որմէ ետք բուրգերով եւ մարզական



եան ժամը 6:00-ին, Գամիշլիի «Կիւլպէնկեան» սրահէն ներս տեղի ունեցաւ Սկաուտի Օրուան տօնակատարութիւնը, ներկայութեամբ ՅԱԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Չաւեն Գասպարեանի, պատկան մարմնի, ազգային եւ միութեանական մարմիններու ներկայացուցիչներու եւ հոծ բազմութեան:

Յանդիսութեան բացումը կատարեց ՅԱԸՄ-ի փողերախումբը՝ ազգային երգերով, որուն ընկերակցեցաւ սկաուտական տողանցքը:

Ապա հանդիսավարները ներկաները հրաւիրեցին մէկ



վայրկեան յոտնկայս յարգելու յիշատակը մեզմէ առնաւտ բաժնուած ՅԱԸՄ-ականներուն: Արարողութիւնը շարունակուեցաւ Սուրիոյ եւ Յայաստանի քայլերգներով:

Բացման խօսքով հանդես եկաւ Սկաուտ Խորհուրդի ատենապետ բժշկի. Մարի Մելքոնեան, որ պատմական անդրադարձով լուսարձակի տակ առաւ ՅԱԸՄ-ի հիմնադրութեան եւ զարգացման

ներկայացումներով հանդես եկան խումբ մը սկաուտներ՝ արժանաւաստով ներկաներու բուն ծափոցոյններուն: Ազգային եւ ՅԱԸՄ-ի նուիրուած փունջ մը երգերով հանդես եկաւ Քրիստափոր Միքայէլեան: Երգերուն առջնութիւնը ներկայացուեցան լոգունքներ եւ ասմունքներ:

Աւարտին տեղի ունեցաւ երդման արարողութիւն: Օրուան կնքահայրն էր Յովիկ Պալեան, որ արարողութեան ետք կատարեց վկայականաց բաշխում եւ աստիճանատուելութիւն:

Մասնաճիւղի վարչութեան ատենապետ Բժշկ. Անդրանիկ Սարգիսեան շնորհաւորեց սկաուտները՝ մաղթելով անոնց նորանոր վերելք եւ աշխատանքով բեղուն նոր շրջան մը:

Հունկ, հոգեշնորհի հայր սուրբը իր հայրական օրհնութիւնը տուաւ: Յանդիսութիւնը փակուեցաւ «Պահպանիչ» աղօթքով եւ ՅԱԸՄ-ի քայլերգով:

**Բժշկի. Մարի Մելքոն**